№ 94 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՄԱՅԻՍԻ

1910

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՄԱՅԻՍԻ № 94

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергiевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆոն № 253

ՄՇԱԿ

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
7 ՐՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով)։

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Չորեքշաբթի, մայիսի 5-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
(Միքայէլեան փողոց, № 107)

ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ

Յօգուտ
Թիֆլիսի հայ չքաւոր երեխաներին օգնող «ԼՈՅՍ» Ընկերութեան

1) Զբօսանքին տեղի կունենայ յայտնի գարմօնիստ ԲԱԽՇՕԻ համերգը։
2) Կուպլէտ.-կարտասանք Գ. Փիրումեան։
3) Մանկական խաղեր (մրցանակաբաշխութեամբ)։
4) Սինեմատոգրաֆ։
5) Մանդոլինիստներ։
6) Պտի-ժիօ։
7) Բաղդի անիւ։
8) Ավտոմատ հաւ։
9) Երաժշտական նուագախումբ։
10) Սազանդարներ։
11) Օղակների նետում։
12) «Տիկնիկ» հանելուկ։
13) Բուֆէտ և այլն։

ՊԱՐԵՐ

Զբօսանքի սկիզբը ցերեկվայ ժամը 3-ից։
Մուտքը հասակաւորների համար 25 կ., երեխաների և աշակերտների համար՝ 15 կոպէկ։
Մանուկներին մուտքի մօտ բաժանվում է ՁՐԻ զանազան պետութիւնների դրօշակներ։
Մանկական խաղերի սկիզբը ժամը 5-ից։
Անձրևային եղանակ լինելու դէպքում զբօսանքը կը յետաձգվի։
(Ե. Հ.) (առ.) 503. 2—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, մայիսի 6-ին, 1910 Թ.

XXV ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ XXV

Վրաց և Հայոց Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնը ի պատիւ 25-ամեայ բեմական գործունէութեան թէ վրաց և թէ հայոց արտիստ

ԳԵԴԵՈՆ ՄԻՐԱՂԵԱՆ-ԳԵԴԵՎԱՆՈՎԻ

կը ներկայացնէ

I
Վրաց լեզուով Մոլիէրի **ՏԱՐՏԻՒՖ** 4-դ արարուած ռեժիսոր՝ Շատիրով

II
Հայերէն լեզուով Գ. Սունդուկեանի **ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ** 1-ին արարուած ռեժիս. տ. Օ. Մայսուրեան

III
Վրաց լեզուով Ա. Ցագարելիի **ԽԱՆՈՒՄԱ** 2-դ արարուած ռեժիսոր՝ Շատիրով

IV
ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Մասնակցում են՝ տ. տ. (ըստ այբուբենի) Տ. Աբաշիձէ, Ն. Գաբունիա-Ցագարելի, Ա. Գարգարէտելի, Վ. Մելիքեան, Եղ. Չէրքէզովա, Վ. Վարդուճի, օր. օր. Թ. Գոգոլաշվիլի, Վ. Զմշկեան, պ. պ. Վ. Աբաշիձէ, Գ. Միրաղեան-Գեդէվանով, Վ. Գամկրելիձէ, Ն. Գոցիրիձէ, Ա. Իմէդաշվիլի, Ա. Մամիկոնեան, Գ. Մգալոբլիշվիլի, Ե. Զ. Տէր-Դաւթեան։

Տեղերի գինը բենեֆիսային։
Մնացած տոմսակները վաճառվում են Թատրոնի կասսայում։
Սկիզբն է $8\frac{1}{2}$ ժամին։
0—4 (առ.) 466. (Կ.Ե.Հ.) Կարգադրիչ՝ Մասնաժողով

Թիֆլիսի Ժողովարան

Աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների, կանդիդատների, նրանց ընտանիքների և հիւրերի, որ կիրակի, մայիսի 9-ին, տեղի կունենայ Ժողովարանի տեղափոխութիւնը

Ամառային շինութիւնը

Տեղափոխութեան օրը կը կայանայ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԱՇ։ Ճաշի ժամանակ կը նուագէ եւրոպական և ասիական երաժշտութիւնը։

Ճաշին մասնակցելու համար պէտք է վճարել 1 ր. 50 կոպ. (առանց գինու)։

Այն անձերը, որոնք կը ցանկանան մասնակցել ճաշին, թող վաղօրօք գրվեն Ժողովարանի շվէյցարի մօտ։

Հիւրերը թոյլատրվում են ընդհանուր հիմունքների համաձայն՝ մուտքի համար վճարելով 50 կոպ.։

(Հ.ու.Կ.) առ. 504. 3—1

ԲԺԻՇԿ

Զ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆՑ

Մայիսի 1-ից ընդունում է հիւանդներ
ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՅՈՒՄ։
Ամարանոց ուսուցիչ Ս. Մուրադեանցի։
(Հ.ու.Կ.) (առ.) 484. 10—2

ԲԺԻՇԿ

Ա. Մ. ՄԿՐՏՉԵԱՆՑ

Նախկին ասսիստենտ Մոսկվայի Կայսեր. Համալս. կնախօսական կլինիկայի։ Կանացի հիւանդութիւններ և մանկաբարձութիւն։ Բժշկութեան ֆիզիկական մէթոդներ։ Ընդունելութիւնն ամեն օր՝ առ. ժամը 11—12. Բէբուտովսկայա, 58. Մայիսի 20-ից ընդունում է ԽՍՍԵՆՏՈՒԿՈՒՄ (Главн. кур. д. Курмояровыхъ). Կիսլովոդսկում և Պեատիգորսկում (ի այլն տեղեկանալ դրակալայի գրասենեակում)։
(Օ. Մ.) (առ.) 469. 10—4

ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ

Ժուռնալիստների համագումարում քննութեան առարկայ է դարձել ի միջի այլոց այն խնդիրը, թէ որքան ժամանակ պէտք է տևեն հեղինակի իրաւունքները իր աշխատութիւնների վրա իր մահից յետոյ։

Ներկայումս գործող օրէնսդրութիւնը որոշել է այդ ժամանակամիջոցը յիսուն տարի։

Արդեօք համարե՞լ այդ ժամանակամիջոցը խելացի սահմանված թէ՞ ենթարկել նրան փոփոխութեան։

Անկասկած՝ հեղինակի ժառանգները պէտք է որոշ ժամանակ վայելեն այն օգուտները, որ տալիս է նրա աշխատութիւնների վաճառումը, մանաւանդ որ գրական աշխատաւորների մեծագոյն մասը կարիքի մէջ է անցկացնում իր օրերը և ամենից քիչ կարողանում է հոգ տանել ժառանգների ապահովութեան մասին։

Բայց յիսուն տարին չափազանց երկար ժամանակամիջոց է և նպատակայարմար կը լինէր նրան կրճատել մինչև կէսը կամ մինչև երեսուն տարին։

Յիսնամեայ ժամանակամիջոցը առանձին մեծ օգուտներ չէ խոստանում ժառանգներին, իսկ գրական և հասարակական տեսակէտով առաջ է բերում աննպաստ հետևանքներ։

Արդարև՝ հեղինակի ժառանգները ստանալով քսանհինգ կամ երեսուն տարվայ ընթացքում արդիւնք այն աշխատութիւններից, որ թողել է նրանց գրական նախորդը, օգտվում են այն ժամանակամիջոցից, երբ թարմ են հեղինակի մասին յիշողութիւնները և երբ շուկայի պահանջ են նրա գրուածքները։

Հեղինակների մեծագոյն մասը այնքան խոշոր անուններից չէ բաղկացած, որոնք դարեր շարունակ գարթեցնէին հետաքրքրութիւն ընթերցողների մէջ։ Նրանց փոխարինում են նոր անուններ, որոնք գրաւում են հասարակութեան ուշադրութիւնը։ Եւ որովհետև գրական շուկան ամեն տարի ողողվում է հարիւրաւոր և հազարաւոր աշխատութիւններով, շատ քիչ երկասիրութիւնների է բաղդ վիճակվում նուաճել ընթերցողների շարքեր տասնեակ տարիներից յետոյ։

Ճիշդ է, առաջնակարգ հեղինակները դառնում են ազգային պարծանք և անմահանում են և ուրեմն ոչ միայն չեն կորցնում իրանց հետաքրքրութիւնը, այլ ժամանակի ընթացքում գրաւում են ընթերցողների աւելի եւ ընդարձակ շրջաններ, բայց այդպիսի բացառիկ անձնաւորութիւններ թէ իրանց կեանքի ժամանակ և թէ նրանց ժառանգները հեղինակի մահից յետոյ առաջին քսանհինգ-երեսուն տարիների ընթացքում այնքան օգուտներ են ստանում, որ ներելի է, եթէ այնուհետև հասարակութիւնն է տէր դառնում այն գրական հարստութեան, որ թողել է հեղինակը։

Հասարակական տեսակէտով այն չէ կարևոր, որ նա տէր դառնայ հեղինակի աշխատութիւններից գոյացող դրամական արդիւնքների վրա։ Ոչ։ Ամենևին ոչ։ Հասարակութեան համար կարևոր է ազատ հրատարակութեան իրաւունքը։

Կարևոր է այն, որ իւրաքանչիւր մարդ իրաւունք է ստանում հրատարակել այս ու այն հեղինակի գրուածքները ազատօրէն։

Կարևոր է այն պատճառով, որ իւրաքանչիւր հրատարակիչ կարող է տալ հասարակութեանը այն հեղինակի գրուածքները, որ նրան ցանկալի են և որի վերաբերութեամբ պահանջ է զգացվում հասարակութեան մէջ։

Յաճախ և շատ յաճախ հեղինակի ժառանգները վնասում են իրապէս նրա անուան և փառքին, չը կարողանալով ժամանակին հրատարակել թողած աշխատութիւնները և տալ հասարակութեանը։ Կամ դրամական միջոցների պակասութիւնը, կամ հրատարակչական անընդունակութիւնը և կամ քմահաճոյքները խոչընդոտ են հանդիսանում ժամանակին լոյս ընծայելու հեղինակի երկասիրութիւնները և մոռացնել են տալիս հեղինակի անունը այն հասարակութեան մէջ, որը ուրախութեամբ կընթերցասիրէր նրա գրուածքները, եթէ հանդէս դրված լինէին նրանք գրավաճառական շուկայում։

Եւ ի՞նչ։ Պէտք է անցնի մի յիսուն տարի, որ նոր-նորից ժամանաւոր հրատարակիչներ ձեռնարկեն հեղինակի անուան թարմացնելու գործին և նրա աշխատութիւնների տարածմանը հասարակութեան մէջ։

Իսկ յիսուն տարվայ մէջ շատ աշխատութիւններ հնանում են, կորցնում են ժամանակակից հետաքրքրութիւնը և ստանում են միայն պատմական նշանակութիւն։

Անշուշտ՝ թէ հեղինակի անուան ու գործերի և թէ հասարակական բարոյական շահերի պաշտպանութեան տեսակէտով պէտք է սահմանել աւելի կարճատև ժամանակամիջոց հեղինակի իրաւունքների համար նրա մահից յետոյ։

Քսանհինգ տարին, իսկ առ առաւելն երեսուն տարին պէտք է բաւական համարվեն ժառանգների իրաւասութեան համար և այնուհետև հեղինակի աշխատութիւնների իրաւունքը պէտք է անցնի հասարակութեան։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պեատիգորսկ, 3 մայիսի

Թագաւոր Կայսրը բարեհաճեց առևտրական ու արդիւնաբերական գործիչների համագումարի արտայայտած զգացմունքներին պատասխանել.

«Հաղորդեցէք Իմ անկեղծ շնորհակալութիւնը համագումարին ժողովվածներին եւ Իմ ցանկութիւնը նրանց՝ եռանդուն եւ օգտակար գործունէութիւն»։ (Հ. Գ.)

Բեռլին, 3 մայիսի

Գանգերմանական լրագիրները նոյնպէս դատապարտում են ռէյխստագի նախագծվող ուղերձը ֆինլանդական հարցի մասին, միանգամայն բաժանելով Դումայի 100 անդամների կարծիքը, և գտնում են, որ ուղերձն աւելի շուտ կը վնասէ ֆինլանդացիներին, քան կօգնէ։ (Հ. Գ.)

Կ. Պոլիս, 3 մայիսի

Կանեայում ազգային ժողովի երեկվայ նիստում մահմեդականները ներկայ չէին։ Աւելի աչքի ընկնող քաղաքական գործիչները պարսաւանք յայտնեցին մահմեդական պատգամաւորների հետ ունեցած ընդհարման համար։ Միջադէպը ընդունվեց սպառված։ Ժողովի Նախագահ ընտրվեց Վէնիզելօսը և ամբողջ պրեզիդիումը՝ նրա կուսակցութիւնից։ Գործադիր կոմիտէն հրաժարական տուեց։ (Հ. Գ.)

Լոնդոն, 3 մայիսի

Ռէյտէրին հեռագրում են Կանեայից. «Հովանաւորող-պետութիւնների հիւպատոսները յայտնեցին երկու կուսակցութիւնների պարագլուխներին, որ եթէ մահմեդականներին չէ տրվում տեղեր ազգային ժողովում, այդ հանգամանքը կարող է ամենալուրջ հետևանքներ ունենալ»։

«Թայմսը» չափազանց համակրանքով է ողջունում գերմանական կայսրին, որ եկել է մասնակցելու Թագաւորի թաղմանը։ Լրագիրն ասում է. «Երբեք, անգամ Անգլիայի և Գերմանիայի ամենալարված յարաբերութիւնների ժամանակ, կայսրը չէ կորցրել իր ժողովրդականութիւնը Անգլիայում»։

Եկաւ Րուզվէլտը ընտանիքով։ Թագաւորի յանձնարարութեամբ նախկին նախագահին ընդառաջ գնաց Կինըօրօ կայարանը լորդ Դենդօնալը։ Րուզվէլտը ցերեկով ընդունվեց Թագաւորից և մնաց Մալբորօ պալատում մի ժամի չափ։ (Հ. Գ.)

Սոֆիա, 3 մայիսի

Սլաւօնական կօնգրէսի կազմակերպիչ յանձնաժողովի Նախագահը յայտնեց, որ վերջնականապէս որոշված յուլիսի 6-ին կայանալիք սլաւօնական համագումարը կը տևէ չորս օր։ Լեհական խմբակը կօնգրէսին չէ մասնակցելու։ (Հ. Գ.)

Նիւ-Եօրկ, 3 մայիսի

Նիկարագուայի կառավարութիւնը կարգադրեց փակել բոլոր նաւամատոյցները Ատլանդեան ովկիանոսում, բացի Գրէյտօնից։ (Հ. Գ.)

Պետերբուրգ.—«Новая Русь» լրագրի հրատարակութիւնը դադարեց։

Քաղաքապետը փակեց Թատրօնական կլուբը։

Պետերբուրգում սպասվում է Րուզվէլտը։

Մայիսի 9-ին պետական պաշտպանութեան մասնաժողովը մեկնելու է դիտելու համար ֆինլանդական ծովափի ամրութիւնները և նաւահանգիստները։ («Б.»)

Վարշավա.—Սենատորական քննութիւնը կը տևէ ամբողջ ամառը։ («Б.»)

Եկատերինօսլաւ.—Թունաւորվեց 12 տարեկան մի աղջիկ, որին տիրուհին ծեծել էր։ («Б.»)

Բեռլին.—Գերմանիան Կրետէի վերաբերութեամբ գրաւել է սպասողական դրութիւն։ («Б.»)

Սալօնիկ.—Ազգաբնակութիւնը յուզված է Յունաստանում կատարվող մօբիլիզացիաների լուրերից։ («Б.»)

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Սալոնիկ, 3 մայիսի

Ջէրնօլէվի լեռներում տեղի ունեցած կռւից յետոյ նոր ընդհարումներ չեղան։ Թիւրք զօրքերը պատրաստվում են արշաւել Դրէնիցայի վրա, ուր կենտրոնացած են ալբանացիների գլխաւոր ոյժերը։ Յարձակումը լինելու է երեք կողմից և համարվում է ամենադժուարը։ Դիակովայի ճանապարհը բաց կը լինի այն ժամանակ, երբ ալբանացիները յետ կը մղվեն Դրէնիցայից։ Զինուորական մինիստրի պատերազմի թատերաբեմ գալը ոգևորեց զինուորներին։

Կռիւները Կարադաղի լեռներում շարունակվում են։ Վիրաւորվել են 3 թիւրք օֆիցեր և 50 զինուոր։ Սև-Դրինի հովիտն ուղարկվեց վեց բատալիօն։

Մահմուդ Շէվքէթը վերադարձաւ Ֆերիզովիչ։

Ադրիանուպօլսի վիլայէթի բոլոր քաղաքներում կայացան միտինգներ կրետական հարցի առիթով։ Բանաձևով դիմումն է լինում Ալբանիայի հոգևոր պետերին՝ խնդրելով ազդել ապստամբների վրա և համոզել նրանց դադարեցնել արիւնհեղութիւնը և պաշտպանել զօրքին Թիւրքիայի իրաւունքները Կրետէում պաշտպանելու համար։ (Հ. Գ.)

Թեհրան, 3 մայիսի

Դատական հաստատութիւնները, հակառակ պետական խնամակալի և մէջլիսի հրամանի, շարունակում են իրանց գործունէութիւնը։ Հոգևորականութիւնը և ժողովուրդը պահանջում են նրանց փակումը։ Արդարադատութեան մինիստրը հրաժարական տուեց։ Բուկնուդ-Դօվլէի հրաժարականը վճռված է։

Խօրասանի նահանգապետ մատնանշված է Սահիբ-Իխտիարը։

Կառավարութիւնը յանձնարարեց շահնշահի բանկին՝ գնել նորագոյն տեսակի 50,000 հրացան և 10 միլիոն փամփուշտ։ (Հ. Գ.)

Ուրմիա, 3 մայիսի

Թիւրքաց հեծելազօրները առանց Պարսկաստանի գիտութեան Ուրմիայի վրայով անց ու դարձ են անում իրանց գրաւած մի շրջանից միւսը։ Խօյից հաղորդում են, որ գործադուլը աղի հարկի դէմ անաջողութեան հանդիպեց. հարկերն արդէն առնվում են։ (Հ. Գ.)

Թեհրան.—Հացի պակասութեան պատճառով ազգաբնակութիւնը աղմկում է։ («Б.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵԴԵՈՆ ՄԻՐԱՂԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Վաղը, Թիֆլիսի հայ և վրացի հասարակութիւնը տօնում է դերասան Գեդէոն Միրաղեանի քսանհինգամեայ բեմական գործունէութեան յոբելեանը։

Այդ առիթով տեղի կունենայ մի հայ-վրացական խառն ներկայացում Արտիստական Թատրօնում։ Հայերէն կը խաղացվի Գ. Սունդուկեանի «Քանդած օջախ» կօմեդիայի առաջին գործողութիւնը, իսկ վրացերէն՝ Մոլիէրի «Տարտիւֆի» չորրորդ և Ցագարելիի «Խանում» պիէսի երկրորդ գործողութիւնները։

Այնուհետև տեղի կունենայ յոբելեանական հանդէսը։

Զանազան հիմնարկութիւններ ընտրել են պատգամաւորներ ներկայ լինելու յոբելեանի տօնակատարութեանը և շնորհաւորելու յոբելեարին։

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ ԵՒ ԻՆՍՏՐՈՒԿՏՕՐՆԵՐ*)

Ի՞նչ է հարկաւոր մանր հողատէրերին։ Բացի հողից, գիւղական բանկերից, զանազան կօօպերատիվ ընկերութիւններից, փորձնական դաշտերից, կատարելագործված մեքենաներից և այլն՝ անհրաժեշտ է գիւղացիներին ծանօթացնել և այդ նոր մեքենաների հետ, անհրաժեշտ է սովորեցնել նրանց օգտվել այդ մեքենաներով, պարարտացնող միջոցներով, որպէսզի նրանք քիչ հողից էլ մեծ արդիւնք ստանան։

Երևակայեցէք մի վայր, որտեղ բնակվում են մանր հողատէրեր, որ այնքան սովորական բան է տեսնել մեր գիւղերում Ռուսական, Թիւրքական ու Պարսկական-Հայաստանում։ Այդ գիւղացիները իրանց հողերը այնպէս են վարում, ինչպէս տեսել են իրանց պապերից, և միշտ քաղցած են. հողը ընտանիքի բոլոր անդամներին չէ կարող գործ տալ և այդ պատճառով աւելորդ ոյժերը գնում են զանազան քաղաքներ, գործարաններ՝ մի կտոր հաց աշխատելու համար: Մինչդեռ հողը և կլիման թոյլ են տալիս բարձր կուլտուրայով զբաղվել և թէ ընտանիքի բոլոր անդամների համար գործ ստեղծել և թէ աւելի շատ վաստակել համեմատաբար քիչ հողից: Այդ բոլորը ի հարկէ կարելի է անել, բայց ո՞վ է մեր գիւղացուն սովորեցնողը: Գիւղացին գիտէ և հաւատում է այն ամենին, ինչ որ տեսել է իր անձնական փորձերից. նա չէ հաւատում զանազան թէօրիաներին, որոնց հասկանալու համար հարկաւոր է և մտաւոր զարգացում, որից զուրկ են մեր գիւղացիները: Գիւղացին շատ շուտ իւրացնում է գիտութեան արդիւնքները, երբ նրանք պարզ և շուտ են երևում և երբ գիւղացին տեսնում է այդ արդիւնքները. մի աջող փորձ պատճառ է դառնում հազարների համար և շատ շուտ տարածվում է մի որևէ շրջանում: Հողագործը, որ միշտ կռւում է մի կտոր հացի համար, ժամանակ չունի փնտռելու գիտութեան աղբիւրներ: Հարկաւոր է որ մէկը նրա ուշադրութիւնը դարձնի, ծանօթացնի գիտութիւնների հետ և այդպիսով ստիպի նրան մտածել:

---

*) Տես Անցիֆէրովի, Չուպրովի և Տօտոմեանի աշխատութիւնները։

Այդ պատճառով անհրաժեշտ է, որ գիտնականները մօտենան գիւղացուն, զարթեցնեն նրա միտքը և իսկոյն այնտեղ գան օգնութեան, ուր հարկաւոր են նրանց խորհուրդներն ու ցուցմունքները: Ինչքան շուտ, լայն եւ անմիջապէս օգնութիւն է հասնում գիւղացիութեան, այնքան շուտ եւ հեշտ է առաջ գնում ժողովրդի տնտեսական զարգացումը:

Հասկանալով թէօրիայի գործադրութեան անհրաժեշտութիւնը կեանքում, Գերմանիայում դեռ անցեալ դարի սկիզբներից կազմակերպվեցին գիւղատնտեսական ընկերութիւններ, ծանօթացնելու գիւղացիներին գիտութեան արդիւնքների հետ: Այդ ընկերութիւնների առաջին գործը եղաւ գիւղացիութեան մէջ տարածել գրագիտութիւն, իսկ յետոյ հիմնելով զանազան գիւղատնտեսական դպրոցներ՝ շատ փորձերից յետոյ կանգ առան այսպէս ասած Fortbildungsschulen դպրոցի վրա, որն անմիջապէս կապված է ժողովրդական դպրոցի հետ: Այս տեսակի դըպրոցները շատ շուտով տարածվեցին, դարձան գլխաւոր միջոցը տարածելու ժողովրդի մէջ կատարելագործված միջոցներ՝ տնտեսութիւնը զարգացնելու համար:

Այդ Fortbildungsschulen կոչվող դպրոցների նպատակն է շարունակել այն ուսումը, որ ստացվում է տարրական դպրոցում, և լրացնել նրան գլխաւորապէս գիւղատնտեսութեան և գործնական կեանքին համեմատ: Այդ դպրոցներում ևս ուսուցանում են կարդալ, գրել և համարել. կարդալու համար վերցնում են գիւղատնտեսութեան մի որևէ լաւ ձեռնարկ. աշակերտը կարդացածը բերանացի և գրաւոր պատմում է, իսկ ուսուցիչը բացատրում է. գրելու համար տալիս են առօրեայ կեանքին վերաբերեալ թեմաներ, օր. զանազան նամակներ և դոկումենտներ գրել. գեղագրութիւնը միացնում են գիւղատնտեսութեան վերաբերեալ նամակներ, հաշիւներ, ցուցակներ գրելու հետ. Թուաբանութիւն դասաւանդելիս ուշադրութիւն են դարձնում գլխաւորապէս զանազան չափսերի, կշիռների, փողերի վրա, այլ և մտքի մէջ հաշւելուն, և այդ բոլորի համար վերցնում են օրինակներ առօրեայ կեանքից և երկրագործական պրակտիկայից: Այս պարտաւոր առարկաների վրա աւելացնում են, եթէ կան ոյժեր, և աշխարհագրութեան, բնագիտութեան ու գիւղատնտեսութեան դասեր: Այս երեք առարկաներից անցնում են այնքան, ինչքան պէտք կը գայ իրանց գաւառին, երկրին, հայրենիքին և առօրեայ կեանքին: Այսպիսի Fortbildungsschulen դպրոցները միդասեան դպրոցներ են (մի տարվայ կուրսով): Դասաւանդութիւնը լինում է կիրակի և տօն օրերում, իսկ ձմեռը շաբաթական մէկ կամ երկու լի օրերում: Դասաւանդում են գլխաւորապէս ժողովրդական դպրոցների ուսուցիչները առանձին վարձատրութիւնով: Նրանց հետ միաժամանակ դասաւանդում են և կողմնակի անձինք:

Այդպիսի դպրոցները սովորաբար գտնըվում են տեղական գիւղատնտեսական ընկերութիւնների հսկողութեան տակ. նրանք տալիս են ծրագիր, նշանակում են ուսուցիչներ, վերահսկիչ և վերաստուգող յանձնաժողովներ, ստանում են հաշւետւութիւն և միջոցներ են գտնում դպրոցները պահելու համար: Միջոցներ տալիս են և գիւղական հասարակութիւնները, զեմստվօները և պետութիւնը: Գիւղերը տալիս են բնակարան, վառելիք ու լուսաւորութիւն, իսկ գիւղատնտեսական ընկերութիւնները, զեմստվօները և պետութիւնը՝ ուսուցիչներին ռոճիկ:

Հարուստ գիւղերում գոյութիւն ունեն և այսպէս ասած ձմերային գիւղատնտեսական դպրոցներ, որտեղ ձմերային 4 ամիսներում ամեն օր պարապում են. և որովհետև աշակերտները մեծ մասամբ անպատրաստ են լինում, այդ պատճառով 2 ամբողջ ձմեռ են պարապում և բաւականին լայն ծրագրով:

Գլխաւորապէս սովորեցնում են բնագիտութիւն և գիւղատնտեսութիւն տեղական պայմաններին համեմատ: Առաջին տարում (ձմերային չորս ամիսներում) կարդում են ընդհանուր երկրագործութիւն՝ այսինքն 1) բոյսերի, հողերի, հողերը պարարտացնելու և զանազան երկրագործական մեքենաների և երկրագործութեան ընդհանուր կանոնների մասին և 2) երկրագործութիւն տեղական պայմանների համեմատ: Երկրորդ տարում, բացի կրկնելուց՝ ինչ որ անցել էին առաջին տարում, սովորեցնում են և հետևեալը. 1) գիւղատնտեսական տնտեսութիւն, 2) հաշւապահութիւն, 3) գիւղատնտեսական թուաբանութիւն: Անասնապահութեան մասին երկու տարվայ ընթացքում էլ խօսվում է մանրամասնաբար:

Բացի այդ երկու տեսակ դպրոցներից՝ Գերմանիայում կան և մասնագիտական կուրսեր, որոնք տևում են մի քանի շաբաթ, օրինակ՝ պտղագործութեան, գինեգործութեան, պարտիզպանութեան, մեղուաբուծութեան, գարեջրագործութեան, շերամապահութեան կուրսեր, կուրսեր՝ որտեղ սովորեցնում են ձիերը պայտել և այլն. բացի այդ բոլորից՝ կան և շրջիկ ուսուցիչներ, որոնք շրջելով գիւղից գիւղ կարդում են դասախօսութիւններ, զրոյցներ են անում գիւղացիների հետ, խօսում են նոր կատարելագործված մեքենաների մասին, նոր բոյսերի, նոր տեսակի պարարտացնող միջոցների մասին և այլն:

Առանձին ուշադրութեան արժանի են գիւղատնտեսական գրադարանները, այլ և պարբերական հրատարակութիւնները, որոնք ի հարկէ շատ տարածված են Գերմանիայում և մեծ օգնութիւն են հասցնում գիւղացիներին:

Միևնոյն բանը մենք տեսնում ենք Իտալիայում: Զանազան գիւղատնտեսական և կօօպերատիվ ընկերութիւններ պետական գանձարանի աջակցութեամբ շատ բան արին ոչ թէ միայն բանւորների, այլ և գիւղացիների համար:

Ամենից շատ գործում է այդ ասպարէզում Միլանում հիմնված Umanitaria ընկերութիւնը, որի հիմնադիր Պրօսպեր-Մօյզէս Լօրիան նուիրել է այդ ընկերութեանը 10.000,000 ֆրանկ:

Այդ ընկերութեան հողային բաժինը սկըսեց գործել 1905 թ. և ուղարկելով զանազան ինստրուկտորներ՝ կազմակերպեց և մինչև այժմ էլ կազմակերպում է այսպէս ասած թռուցիկ կուրսեր գիւղերում, որոնք գիւղացիներին սովորեցնում են գրել-կարդալ, կաթնատնտեսութիւն, պարտիզպանութիւն, ծանօթացնում են մեքենաների հետ և այլն, կազմակերպում են զանազան վարկային, սպառողական և այլն կօօպերատիվ ընկերութիւններ: Այդ Umanitaria ընկերութիւնը մեծ գումարներ է նուիրել գիւղատնտեսական գրադարաններ կազմակերպելու համար, նպաստներ է տալիս զանազան գիւղատնտեսական դպրոցներին և այլն, և այլն:

«Միութիւնն ոյժ է» կամ «մէկը բոլորի համար, բոլորը մէկի համար» նշանաբան վերցնելով՝ գերմանացիք տասնեակ հազար կօօպերատիվ միութիւններ են կազմակերպել և այսօր նրանք առաջնակարգ և հարուստ ազգութիւններից մէկն են, և դուք նրանց հայրենիքում չէք տեսնի մի գիւղացու, որ ծանօթ չը լինի գիւղատնտեսութեան գոնէ տարրական կանոնների հետ կամ չը հետաքրքրվի փորձնական դաշտերով և այլն և այլն...

Այնպիսի մի հրեայ, ինչպիսին էր Պ.-Մ. Լօրիան, մեծ օգնութիւն հասցրեց Հիւսիսային Իտալիայի գիւղացիութեանը: Իտալիայում ևս կօօպերացիան, ինչպէս և Գերմանիայում, Դանիայում, Բելգիայում, Ֆրանսիայում և այլն, շատ մեծ դեր է կատարել և մեծ օգնութիւն է հասցնում գիւղացիութեանը:

Շատ ցանկալի է, որ մեր հարուստներից մէկը մտածէր հայ չքաւոր գիւղացիութեան մասին և իր հարստութիւնից տար 30—40 հազար ռուբլի՝ գիւղացիութեան մէջ տարածելու կօօպերացիայի գաղափարը՝ կօօպերատիվ վարկային ընկերութիւններ (գիւղական բանկեր), գիւղատնտեսական, սպառողական ընկերութիւններ հիմնելու և շրջիկ ուսուցիչներ ուղարկելու գիւղերը ուսուցանելու գիւղացիներին կատարելագործված միջոցներով և մեքենաներով վարել հողը, շերամ, մեղու, կով, եզ, ձի, ոչխար պահել, պանիր կամ իւղ պատրաստել և այլն և այդպիսով գիւղացիութեանն օգնել ոտի կանգնելու և ազատվելու վաշխառուներից, միջնորդներից, և իր քրտինքով վաստակածն իր համար պահելու, որպէսզի յետոյ 1/10 այն տոկոսներից, որ վճարում է հիմա զանազան վաշխառուներին, կարողանայ ծախսել կուրսեր, շրջիկ ուսուցիչներ, ինստրուկտորներ պահելու համար և այդպիսով իր ցաւերը կարողանայ հոգալ առանց դիմելու բարեգործների և հարուստների:

Բարոյական և կուլտուրական օգնութիւն հասցնելով ազգաբնակութեան մասսային, գիւղացիութեանը՝ հարուստ գործարանատէրը՝ կալուածատէրն ինքն իրան կօգնէ, որովհետև իր քրտինքով վաստակածը գիւղացին կը ծախսէ միևնոյն հարուստի հանքից, գործարանից ապրանք գնելու համար, կը վերցնէ նրա հողերը շահագործելու համար և ուրեմն աւելի շատ օգուտ կը տայ նոյն գործարանատէրին կամ կալուածատէրին:

Յար. Յակոբջանեան

Բագու

I. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԱՆԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Պետերբուրգ, 26 ապրիլ

Շնորհիւ Մօսկվայի բանւոր-ներկայացուցիչների՝ համագումարը ուրիշ բնաւորութիւն է ստանում:

Նրանք շօշափելով անառակութեան խընդիրը՝ գտնում են, որ այդ ախտի միակ պատճառն է բանւոր դասակարգի տնտեսական անապահովութիւնը:

Եւ որպէս միջոցներ՝ առաջարկում են բանւորական կուսակցութեան ծրագրի տընտեսական պահանջների իրականացումը:

Այս առաջարկները, շատ թէ քիչ կամ կոմպրոմիսներով մասամբ ընդունվում են, իսկ յետոյ՝ տեղի են տալիս բրօնիքական միջադէպերի:

Սկսած համագումարի նախագահ ֆօն-Անրէպից մինչև ոստիկանութեան ներկայացուցիչ Շերեկօն՝ քայլ առ քայլ հալածում են դրանց ցանկութիւններն ու առաջարկները: Եւ բանը վերջանում է նրանով, որ բանւոր-ներկայացուցիչները բողոքելով դրանց վերաբերմունքի առիթով՝ դեմօնստրատիվ կերպով հեռանում են համագումարից:

Բանւոր ներկայացուցիչները, ժամանակցելով համագումարի նիստերին, միևնոյն ժամանակ պնդում էին, որ բանւորի ազատութիւնը՝ իրան բանւորի ձեռքով է լինելու, և ապա դիմում ոչ-բանւոր պրինցեսաներին՝ իրանց տնտեսական ապահովութեան համար:

Մենք գիտենք 18-րդ դարի ուտոպիստ սօցիալիստներին, որոնք իրանց սկզբունքների իրականացման համար դիմում էին բուրժուա դասակարգին և յանուն համամարդկային սիրոյ քարոզում սօցիալիզմի գաղափարները:

Սա մի կողմից:

Միւս կողմից պէտք է ասել, որ տնտեսական բարենորոգումը այնքան էլ չէ կարող ապահովել մեզ անառակութիւնից...

Ինչո՞ւ:

Որովհետև մենք գիտենք եւրոպական և ամերիկական բանւորների բարեկեցիկ դրութիւնը, սակայն անառակութիւնը այնտեղ էլ շարունակում է ապրել և զարգանալ ժամանակի ընթացքում...

Բացի սրանից՝ մենք գիտենք մի շարք անառակների, որոնք թէև ոսկեայ և ադամանդեայ քարերի մէջ են թաղված, բայց և այնպէս շարունակում են պարապել անառակութեամբ... Վերջապէս գիտենք և ընտանեկան կանանց և ամուսինների, որ ամեն բանով ապահովված են, սակայն միևնոյն ժամանակ պարապում են ընտանեկան գաղտնի անառակութեամբ...

Անառակութիւնը վերին աստիճանի աճողական և բազմակողմանի մի ախտ է. մօտենալ դրան միայն տնտեսական խնդիրներով՝ չափազանց միակողմանի կը լինի...

Այսօր անառակութիւնը մենք հասկանում ենք երկու կերպ. մէկը՝ որ կինը վաճառում է իր մարմինը՝ ստիպված ներկայ քաղաքական-տնտեսական պայմաններից, և միւսը՝ որ նա մտնում է այդ շրջանը, իր հոգեբանական պահանջներին բաւարարութիւն տալու նպատակներով:

Առաջին տեսակի անառակները գոհ չեն իրանց դրութիւնից (որովհետև ստիպված են) և պատրաստ են առաջին քայլից իսկ թողնել այդ ստոր արհեստը և դիմել մի ուրիշ ձևի աշխատանքի, մինչդեռ երկրորդ տեսակինը՝ ոչ: Նա հոգեբանօրէն անառակ է... Նրան եթէ հանէք այդ ախտից, պահէք ոսկեայ և ադամանդեայ զարդերի մէջ, ապահովէք ամեն կերպ, դարձեալ նա չէ կարող ժամանակաւոր սեփականութիւն չը դառնալ մի քանի մարդկանց և դրանով չը գոհացնել իր անսանձ կրքերը:

Այսօր, մեր զարգացման շրջանում, եթէ քաղաքա-տնտեսական այս կամ այն պայմանները նիւթապէս ապահովում են բանւոր դասակարգին, դրանով կարելի է ասել, որ շատ թէ քիչ չափերով պաշտպանում են առաջին ձևի անառակութիւնից, սակայն միւս կողմից լայն ասպարէզ են բաց անում երկրորդ ձևի առաջ...

Եւ հէնց այս է պատճառը, որ, չը նայած եւրոպական առաջադիմութեան, անառակութիւնը այնուամենայնիւ շարունակում է ապրել և զարգանալ:

Համագումարը իր մի շարք ժողովներում, շօշափեց միայն անառակութեան տնտեսական կողմերը և, որպէս բարոյական միջոցներ, որոշեց փակել բոլոր անառականոցները և վերացնել այսօրվայ ռեգլամենտացիան:

Համաձայն այդ որոշումների, անառակը այսուհետև ազատ է. նա չունի այլ ևս «դեղին տոմսակը». նա ինքն է տէրն ու տիրականը իր մարմնի և կարող է կատարել այն, ինչ որ իր կամքն է թելադրում:

Վերջացա՞ւ արդեօք սրանով անառակութիւնը Ռուսաստանում:

Ի հարկէ ոչ:

Նա, ազատվելով իր այսօրվայ կապանքներից, աւելի լայն չափեր կը ստանայ և կը տարածվի ամեն տեղ, թողնելով իր ետևից ամենավնասակար հետևանքներ:

Ուրեմն ինչ անել...

Պէտք է վերածնել անհատին իր ներքին աշխարհում:

Անհատը պէտք է նորից դաստիարակվի այն ուղղութեամբ, որ նա ճանաչի իր պարտականութիւնները, որոշի անառակութեան սօցիալական վնասները, ծանօթանայ իր շրջակայքին և ըստ այնմ կատարէ իր քայլերի ընթացքը:

Այսպիսի անհատը առանց այս կամ այն թղթեայ օրէնքների էլ՝ ազատ կը մնայ այդ համաճարակից և ամեն կերպ կաշխատի կռւել մարդկութեան զարգացման այդ ամենամեծ թշնամու դէմ:

Իսկ դրան պէտք է ուղղված լինեն մեր դպրոցական բարոյական դաստիարակութեան ջանքերը և հասարակութեան ինտելիգենցիայի բոլոր ոյժերը:

Հակառակ դէպքում՝ օրէնքը կը մնայ թղթի վրա որպէս մի մեռած տառ, իսկ անառակութիւնը՝ կեանքի մէջ որպէս խայտառակութեան մի անարգ դրօշմ:

Մ. Աղեան

ՌՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՐԻՔԻ ՇՈՒՐՋԸ

Մօսկվայի կայս. համալսարանին կից գտնվող Չքաւոր Ուսանողներին Նպաստող Ընկերութիւնը մի քանի ժամանակ առաջ մի կոչ էր արել՝ ուղղված հասարակութեան: Այդ կոչի մէջ, որ իր ժամանակին լոյս տեսաւ Մօսկվայի բոլոր թերթերում, ընկերութեան նախագահ Կօմիսարօվը՝ թռուցիկ կերպով կանգ առնելով ուսանողական ծով կարիքի վրա՝ խնդրում էր հնարաւորութիւն տալ, որպէսզի ընկերութիւնը կարողանայ բաւարարութիւն տալ բոլոր խնդրատու-ուսանողներին: Նա ասում էր, որ ձրի ճաշի խնդրողների թիւը 600 հոգուց աւելի է, բայց ընկերութիւնը, չը նայած որ կարող է 400 ճաշ տալ միայն, ստիպված է, անցեալ տարվայ վերջին ամիսներում 500 ճաշ տալ, յուսալով, ի հարկէ, որ ընկերութիւնը համապատասխան նուիրատուութիւններ կը ստանայ հասարակութեան զանազան խաւերից: Ցոյց տալու համար, թէ ընկերութիւնն ինչ եղանակով է ձրի ճաշերը բաշխում չքաւոր ուսանողների շրջանում, կոչի մէջ բերված էին հետևեալ ուշագրաւ օրինակները:

Այսպէս, ուսանող С., որ ամսական 10—12 ր. է ստանում իր ուսուցչուհի մօրից, որը հասարակ վարժուհի լինելով տարեկան 300 ր. միայն ունի, և ուսանող Ц., որը նոյնչափ է ստանում իր՝ գիմնազիայի պահապան (сторожъ) հօրից, այդ 2 ուսանողը, ընկերութեան որոշման համաձայն, օգտվում են ձրի ճաշերից շաբաթական 3 անգամ միայն: Չը պէտք է մոռանալ, որ ուսանող Ц.-ի հայրը ունի նաև 2 աղջիկ, որոնցից մէկը սովորում է դարձեալ հօր հաշւով: Յիշենք նաև, որ ամսական 15 ր. ստացող ուսանողներին ընկերութիւնը մերժել է բոլորովին:

Բերելով այդ օրինակները, ընկերութիւնը կամեցել էր ցոյց տալ ուսանողական կարիքի այն մեծ չափը, որ ներկայումս տիրում է ուսանողների մէջ: Ես ինքս անձամբ գիտեմ ուսանողների, որոնք ո՛չ պակաս չափով կարիք են զգում կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքների մէջ: Շատ լաւ ճանաչում եմ մի ռուս ընկերոջ, որի հայրը երկրորդական նամակաբեր (почтальонъ) է՝ ծանրաբեռնված մեծ ընտանիքով. և նա ամեն ջանք գործ է դնում, որպէսզի իր որդին աւարտի ու բժշկութեամբ պահէ իրան՝ ալեզարդ հօրը: Ո՞վ չը գիտէ, որ կան կօշկակար, դռնապան-ուսանողներ. ո՞վ չը գիտէ, որ ուսանողներից շատերը ամենաստոր պաշտօններ են վարում, միայն թէ իրանց գոյութիւնը մի կերպ պահեն, պահպանեն: Բայց կանգ չառնենք այդ օրինակների վրա, քանի որ ուսանողութեան տաբեգրութեան պատմութիւնը, դժբաղդաբար, հարուստ է այդպիսի ամօթալի օրինակներով:

Անտանելի է, անշուշտ, այն վճիռը, որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՈԼՍՈՅ ԿԵԱՆՔԷՆ

Կ. Պոլիս, 27 ապրիլ

Կայսերական օսմանեան թանգարանին մէջն եմ: Կը զգամ, որ պահ մը Պոլսոյ ճնշիչ միջավայրէն դուրս կը գտնուիմ: Եւրոպական բարեկարգութիւնը հոս Պոլիս այս թանգարանին մէջ փնտռելու է: Հոյակապ վիթխարի շէնք, ընդարձակածաւալ անհունացած սրահներուն առաջին յարկին մէջ մի առ մի սքանչացում կը պատճառեն յունական և հռովմէական շիրիմները. պահ մը կը փոխադրուիս վաղեմի դարերը, ուր կապրէր դիւցազնական մարդկութիւնը, ուր կապրէր արուեստին ինքնաբուխ գեղեցկութիւնը: Թանգարանին վերին յարկը միկրօսկօպիկ հրաշալիքներով հրապուրիչ է. այլազան գեղեցկութիւններ չկան. համանման փոքրիկ արձաններ, բևեռագրութիւններ, պատմական անօթներ: Եւ կըսուի թէ հայկական հնութիւնները Համիդ ջնջել տուած է... Եւ իրօք՝ այդ մեծղի թանգարանին մէջ հայկական ոևէ հնութիւն մը չտեսայ: Մեծ թանգարանին ճիշդ դիմացը՝ կը գտնուի Չինիլի Քեօշքը, ուր մտած ատենս՝ ես ինքզինքս ջամիի մը մէջ կը կարծէի: Մուհամմէդ Երկրորդի օրով շինուած է այն և Մուրադ Երրորդի օրով նորոգուած է 1590-ին: Յատակագիծը ցոյց կուտայ յունական խաչաձև մը, և այդ ձևով կանգնուած է շէնքը. մեհենական պատկառանք մը ունի այն. Թիւրքիոյ ամեն կողմէն ջամիներու թանկագին իրերը հոն զետեղուած են. ունի պատին մէջ կայսեր յատուկ մարմարէ գողտրիկ աւազան մը, արևելեան լապտերներ, մզկիթներու գեղաքանդակ դռներ, գեղեցիկ նախշուն գրութեամբ ֆերմաններ: Եթէ մեծ թանգարանն ալ Չինիլի Քեօշքի արևելեան ոճով շինուած ըլլար, աւելի հիացում կը պատճառէր:

*

Բռնակալ Համիդի տապալումէն յետոյ, առաջին անգամ Պոլիսը կը վայելէր գահակալութեան հանդէսի անկեղծ խանդավառութիւնը: Սուլթանը, որ ամենէն սիրուած է, իր գահակալութեան առաջին տարեդարձի օրը հիւանդ էր. միայն մինիստրներու այցելութիւնն ընդունեցաւ: Սակայն ամբողջ Պոլիսը դրօշներու կարմրախայտ հանդիսաւորութեամբ կը տօնէր իր վեհապետին գահակալութեան տարեդարձը: Դարձեալ հայը իր գերազանց յարգանքը կը ցուցադրէր. ոչ ոք չկրցաւ շքեղութեամբ գերազանցել Պերայի Թոգաթլեան սրճարանը. այդ պերճ շէնքին ճարտարապետական ամեն ուղիղ գծերը տողաշար ելեքտրական լապտերներով լուսավառ՝ պոլսական միջազգային հասարակութեան հիացում կը պատճառէին: Դեսպաններու բնակարանները շատ անշուք ոգևորում մը ցոյց կուտային: Գալաթա-սարայի որջը սահմանադրական հերոսներու պատկերներով զարդարուած էր: Իսկ թագաւորին բնակարանը բացարձակ անշքութեան մէջ էր. եւրոպական ժամը 10-ին՝ պալատէն ելաւ ջահակիր զինուորներու բանակը. սքանչելի էր այն և կը յիշեցնէր հին կայսերաց վիպասանական թափօրումը: Եւ այդ թափօրը Պոլսոյ բարձունքներուն վրայէն՝ թափառական շրջելով անցաւ Պերայէն: Իսկ Վոսփորը բենգալեան հրախաղերով մութ ու մոգիչ ուրուանկարի մը հմայքով սքանչելի էր: Այազ-փաշայի բարձրութենէն դիտելով ծովը և Սկիւտարը՝ կը կարծէի, թէ մութին մէջ ոսկի վառ-վառ փոշի է ցանուած այդ տեղերը:

*

Տեղական ժամուլը՝ հայ թէ եւրոպական՝ էջեր նուիրեցին Կովկասի մէջ մեծ յարգ ունեցող ջութակահար Դաւիթ Դաւթեանին: Տաղանդաւոր վիրտուօզը իր քաջամատն ջութակահարի համբաւը անգամ մը ևս ստուգել տուաւ. դժուարահաճ երաժշտագէտ պոլսեցի միջազգային հասարակութիւնը մեծ խանդավառութեամբ ծափահարեց Դ.Դաւթեանի առհասարակ ամեն կտորները, զորս նուագեց ապրիլ 22-ին հոս Իւնիօն Ֆրանսէզի սալոնին մէջ: Իր տաղանդին քաջութիւնը արտափայլեցաւ ամենէն աւելի Սարազաթէի «Անդալուզ», Վինեավսկիի «Սուվընիր-դը-Մօսկու» կտորներուն մէջ. ու երբ կը ջութակահարէր Սարազաթէի «Գնչուական նուագները», ես տեսայ, որ ամենէն դժուարահաճ երաժշտագէտներն ալ՝ բազմոցներէն ոստոստուն հիացումին ցոյց կուտային բուռն ծափահարութեամբ:

Մեծղի և արտասովոր ընդունելութիւն գտաւ Դ. Դաւթեանի գրած «Հայուն հոգին» տխրանոյշ յղացումը. ազգային ցաւերու սև տխրութիւնը մեղրացած սփոփանքով մեր ամբողջ հոգին սուգին սփոփանքովը կորզէր: Դ. Դաւթեանի խնդրանքովը՝ Ատրուշան այդ երգին համար գրեց և հրատարակեց սա քերթուածը.

Դարերու սուգին ծոցն եմ ես:
Հոգիիս անդունդին մէջ
Ոսկորներու անտառ մ'ունիմ,
Անոր սոյլն է իմ լալօն:
Արցունքի ափին՝ ծաղիկներս կուլան:
Աւերակներուս սև մոխիրն է նստած
Ծաղիկներուս մեռաքսէ այտերուն վրայ:
Մշուշը ինծի հետ ծնաւ:
Ջուրի շուշաններու վրայ
Անկողինս փռեցի:
Խարտեաշ ոսկի վարսերուս մէջ
Սոխակն իր բոյնը չը գտաւ.
Սրտիս մէջ լալկան բուն իր ձագուկները մեծցուց:
Անուրջներուս մէջ փոխան տարփիկ հոգիներու,
Վշտով ուռած լանջքիս վրայ մեռելները կը գրկէի:
Մշուշին մէջ մեռելական կանթեղ մը կար՝
Սև հագած հոգիի մը ձեռքը. այն
Կարմիր կանթեղին մէջ՝ կեանքի իւղն էր որ
Կը սպառուէր, այն կեանքերուն՝
Որոնք ջարդին լախտով հնձուեցան:

Այս բառերը մօտ օրերս Դ. Դաւթեանի երաժշտական խաղերով լոյս կը տեսնէ: Երգը նուիրուած է Հայոց Հայրապետ Վեհ. Իզմիրլեանի:

Հոս մենք թիւրքահայերս անգամ մը ևս տեսանք, որ ռուսահայերուն քովն է, որ կը յառաջանան թիւրքահայ արուեստագէտ տաղանդները: Դ. Դաւթեան թէև բնիկ տրապիզոնցի՝ սակայն, երկար տարիներ մնալով Ռուսաստան, Կովկասի հայերէնը կը խօսի, և այդ իսկ պատճառով տեղացի մէկ քանի հայ թերթեր կարծեցին, թէ ռուսահայ մը ըլլայ ինքը, և այդպէս ալ հրատարակեցին:

*

Ուրախութեամբ տեսանք հայ-կաթոլիկ պատրիարքարանի յուզուած խնդիրներու յաղթական վերջալոյսը, և հիմա յոյսերու արշալոյսին վրայ՝ Թէրզեան գերապայծառի անունը սկսանք կարդալ: Նորընտիր պատրիարքը բարեշրջական մը ըլլալու է անշուշտ...

Ե.

կայացրել էր ընկերութիւնը մասամբ ապահովված ուսանողների վերաբերմամբ։ Թւում է, որ այդպիսի վճիռը խիստ ծանր է հէնց իրա՛ ընկերութեան համար. բայց, ի՞նչ կարող էր անել վերջինս, երբ անհրաժեշտ գումարը չունի իր տրամադրութեան տակ։ Ի՞նչպէս վարվել ուսանողական ծով կարիքի հետ, երբ ընկերութեան գանձարկղում մկներ են պարում. ի՞նչ անել, երբ ընկերութեան դռները մաշում են և ամսական 10—15 ր. ունեցողները և բուլվարներում գիշերող ուսանողները, ուսանողներ՝ որոնք մինչ այդ ամսական 3 ռուբլի վճարում էին մի անկիւնի համար։ Պարզ է, որ ընկերութիւնը այդպիսի դէպքերում ընտրում է երկու չարեաց փոքրագոյնը, գիտակցելով հանդերձ, որ ամսական 10—15 ր. ապրել չէ կարելի մայրաքաղաքում։ Խօսք լինել չէ կարող այդպիսի աննորմալ պայմաններում ուսանողի կանոնաւոր պարապմունքների մասին։

Բայց ուսանողական կարիքի մի գլխաւոր կէտն էլ ուսումնավարձն է։ Նպաստամատոյց ընկերութիւնը յայտարարել էր, որ հարկաւոր է 1000 հոգու ազատել ուսման վարձից. անհրաժեշտ է 36,000 ր., բայց կասսան այդ նպատակի համար միայն 10,000 ր. ունի։ Ուրեմն հարկաւոր է այդ բացը ևս ծածկել։

Ուսանողների, միայն համալսարանի ուսանողների վիճակը խիստ կրիտիկական է։ Նոյն մռայլ պատկերն է ներկայացնում նաև մայրաքաղաքի մնացած բարձրագոյն դպրոցների ուսանողների դրութիւնը։ Ամեն տեղ ճիչ, աղաղակ օգնութեան մասին։ Ամեն տեղ աղաչանք, պաղատանք այդ առիթով։ Եւ այն կոչերը, որոնք տպվել էին լրագիրներում, ունեցան, անշուշտ, իրանց ցանկալի հետևանքը. այն դիմումները, որոնք այդ առիթով արվել էին հասարակական զանազան խաւերին, յարգվեցին, ի հարկէ, նրանց կողմից։ «Չը պէտք է մոռանալ, որ 6 ռուբլին հնարաւորութիւն է տալիս ընկերութեանը՝ 30 օր ձրի ճաշ բաց թողնելու չքաւոր ուսանողին, իսկ 3 ռուբլին՝ 15 օր միայն»,—ասված էր այդ կոչի վերջում։ «Գիտութեան ձգտող մեր երիտասարդութեան կարիքը,—ասված էր այդ կոչի մէջ,—դա, ամենից առաջ, մեր ընդհանուր կարիքն է, այնպէս որ օգնելով նրան՝ մենք օգնում ենք մեզ»։

Ցանկալի է, որ ընկերութեան այդպիսի սրտառուչ կոչերը արձագանք գտնէին նաև Կովկասի ժողովուրդների մէջ, մանաւանդ որ Մոսկվայի համալսարանի ուսանողների մէջ կան մեծ թւով կովկասցիներ, որոնց մէջ հայերն ու վրացիները առաջին տեղն են բռնում։

Չը պէտք է մոռանալ, որ կովկասցի ուսանողները ևս անխտիր մնացած չքաւոր ուսանողների նման օգտվում են ընկերութեան միջոցներից։ Ոսկու-Ջօն

Մոսկվա

ՊԱՏԻՒ ԵՒ ՄԵՆԱՄԱՐՏ

Կովկասին քաջածանօթ գեներալ-լէյտեն. Իվանենկօն վերջերս մի դասախօսութիւն կարդաց՝ յօգուտ Շանեավսկիի համալսարանի՝ «պատիւ և մենամարտ» հետաքրքրական թեմայով։ Այն օրից, երբ մենամարտութիւնը բոյն դրեց հասարակական խաւերում, այն օրից երբ Ռուսաստանի պարլամենտի անդամներն ևս իրանց պատիւը կամեցան մենամարտութեամբ պաշտպանած լինել, մանաւանդ վերջին անգամ Ա. Գուչկօֆն ու կոմս Ուվարօվը,—մի շարք դասախօսութիւններ տեղի ունեցան, որոնցով կամենում են այդ չարիքի դէմ կռւել։ Մի 3 ամիս առաջ առաջին Պետական Դումայի անդամ Նաբօկօվը դասախօսեց մենամարտի մասին, իսկ $1^1/_2$ ամիս առաջ՝ գեն. Իվանենկօն։

Դասախօսը նախ որոշեց պատւի տեսակները. պատիւ զուտ անձնական՝ էգօիստական և պատիւ հասարակական. առաջինն ամեն ոք ունի և աշխատում է արհեստական միջոցներով պաշտպանել, իսկ երկրորդը՝ քչերն ունեն և ձեռք է բերվում հասարակական երկար ու տոկուն գործունէութիւնից յետոյ. այդ պատիւն ոչ ոք խլել չէ կարող, ինչպէս և պաշտպանել. այդ տեսակ պատւի մեծ և անձնուէր պաշտպանը ինքը հասարակութիւնն է և հասարակական կարծիքը։

Ապա ցոյց տուեց պատմական բազմաթիւ փաստերով, որ հնումն անձնական վիրաւորանքներ կրելով այնպիսի խոշոր դէմքեր, ինչպիսիք են՝ Ցիցերօն, Ցուլ. Կեսար, Մաքսիմինոս Փարիոս և այլք, միմիայն արհամարհանքով պատասխանեցին այդ վիրաւորանքներին առանց դիմելու արտաքին արհեստական միջոցների իրանց quasi ընկած պատիւը վերականգնելու համար։ Մենամարտը հանդէս է գալիս միայն ասպետական շրջանում, երբ արտաքին ձևականութիւնը և տղայական կարգերը խոր արմատներ են ձգում, երբ թագաւորների ուժեղանալով հերցօգութիւնները, կոմսութիւնները և այլ իշխանութիւնները փաստօրէն ընկնում են և հանդէս են գալիս ասպետներ իրանց դատարկ ամրոցներով և նոյնչափ դատարկ սովորութիւններով՝ պաշտպանելու իրանց պատիւը և ոչ բարձր տեսակի, այլ էգօիստական, մի այլ ասպետի ոտնձգութիւնների դէմ, ասպետ, որը իր ամրոցի մօտով անցնելիս սիրալիր հայեացք չէր ձգել նրա վրա, կամ խէթ աչքով էր նայել իր ապարանքի վրա։

Եւ այս շրջանում մենամարտութիւնն այն աստիճան համատարած ախտ է դառնում, որ մինչև իսկ ասպետութեան անցնելուց յետոյ էլ երկար ժամանակ իր գոյութիւնը պահպանում է. Նոյն իսկ նոր դարերի թարմացուցիչ հոսանքները չեն կարողանում արմատախիլ անել այդ չարիքը։ Միմիայն Հենրիխ IV-ի ժամանակ 8000 հոգի մենամարտում ընկաւ. դեռ 1560 թ. պետութիւնը ստիպված եղաւ արգելել այս բարբարոս սովորութիւնը, 1563 թ. եկեղեցին դուէլը սատանայի գործ հռչակեց, իսկ պետութիւնը դուէլում մեռածների որդոցը զրկում էր ժառանգական ստացուածքից։ Լիւդովիկոս XIV-ի ժամանակ մենամարտում սպանվեցին դարձեալ մօտ 8000 հոգի. մենամարտում էին ոչ միայն հերցօգները, բարօնները, պրինցները, այլ և թագաւորները։ 1791 թ. ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից յետոյ սահմանադիր ժողովը մենամարտողներին «հոգեկան հիւանդներ» անուանեց և արգելող օրէնք հրատարակեց. սակայն դա միաժամանակ չէր արգելում, որ 2 օրից յետոյ նոյն այդ սահմանադիր ժողովի 2 անդամները միմեանց մենամարտի հրաւիրեին։ Մինչև իսկ 19-րդ դարում այնպիսի գիտնական, գրական, հասարակական և քաղաքական յայտնի գործիչներ, ինչպիսիք են Պրուդօն, Լասսալ, Բիսմարկ, Կավալոտի, վերջապէս Պուշկին և Լերմոնտով, չը գլացան մենամարտի հրաւիրել իրանց հակառակորդներին, և սրանցից, ինչպէս յայտնի է, Պուշկին և Լերմոնտով այս վայրենի թիւրիմացութեան զոհ գնացին, իսկ Կավալոտին 31-րդ մենամարտում իր մահը գտաւ։

Այնուհետև դասախօսը փորձեց որոշել, թէ ինչ մոտիվներից են առաջ գալիս մենամարտի երևոյթները։ Նա բերեց մի օրինակ 18-րդ դարի զինուորական կեանքից, երբ բարքերը կրթվում էին այլ տեսակէտից, երբ օֆիցերներն այնպիսի մեծ արժէք ունէին պետութեան աչքում, որ Ֆրիդրիխ Վիլհէլմ Ա. կայսրը Պրուսիայում մի քանի հրամաններ արձակեց, որ բարձր պաշտօնեաները զօրքի մէջ իրանց ստորադրեալների հետ սիրով վարվեն, և օֆիցերներին պատուիրում էր անքաղաքավարութեան դէպքում թողնել բանակը և դեմօնստրատիվ կերպով հեռանալ զօրքի միջից, մինչև որ վիրաւորող գեներալը կը վերականգնէր այդ օֆիցերի պատիւը։ Այս ժամանակ պատահում է, որ մի մայորի զօրահանդէսի ժամին մօտենում է ինքը կայսրը և իր ձեռով հրում նրան դէպի ներս, կարծելով թէ այդ մայորը շարքից մի փոքր դուրս է եկել և կարգը խանգարում է. մայորը չէ կարողանում այս անսպասելի վիրաւորանքը տանել և իսկոյն ատրճանակը հանում է և ուղղում դէպի կայսրը, որովհետև նրան մենամարտի հրաւիրել անկարող էր. գնդակը դատարկվում է նրա ձիու ոտքերի տակ և ապա վայրկենապէս ատրճանակը դնում է ճակատին ու հոգին փչում։ Այստեղ խօսում է բարձր տեսակի պատիւը, վեհ հոգին. ազնիւ մայորը կամենում էր ասել՝ «Դու խլեցիր իմ պատիւը, առ նաև իմ կեանքը. կամ պատիւս տուր, կամ կեանքս առ»։

Բայց ինչպէս արդարացնել հետևեալ եղերական և անխելք դէպքերը. և նա բերեց բազմաթիւ օրինակներ, որոնցից կը բաւականանանք մենք երեքը յիշելով։

Ուղիղ 30 տարի առաջ նահանգական մի քաղաքում իշխանել էր մի դատական քննիչ, մի կենսուրախ և վարվռուն բնաւորութեան տէր երիտասարդ. մեկ ընտանիքում, ուր բազմաթիւ հիւրերի հետ միասին լինում է նաև մի խմբոտ ու դաժան դէմքով օֆիցեր, այս քննիչը պատմում է իր և այլոց կեանքից զանազան անեկդոտներ և այնպէս վարպետ ձևով, որ հասարակութիւնը ծիծաղից թուլանում է. ամենը ծիծաղով վարակվում է նաև մի գեղանի օրիորդ, դէպի որը օֆիցերն այնքան էլ սառնասիրտ չէ լինում. բոլորը ծիծաղում, զուարճանում են, միայն օֆիցերը լուռ է և թխպոտ։ Դատական քննիչն իր բազմաթիւ անեկդոտներից մէ՛կն էլ պատմելուց յետոյ՝ յանկարծ լռում է. տիրում է մի բոպէ ընդհանուր լռութիւն. ապա նա դառնում է դէպի լուռ օֆիցերն ու գոչում. «Իվան Իվանիչ, ի սէր Աստուծոյ մի անեկդոտ էլ դու պատմիր». Նորից բարձրանում է քրքիջ ու աղաղակ. օֆիցերը կարմրում է, խոժոռում է աչքերը ու զայրացած դուրս գնում։ Միւս օրը հրաւիրում է նա դատական քննիչին մենամարտի. վերջինս ընդունում է հրաւէրը և երեք օր յետոյ կենսաթրթիռ քննիչի դին անշնչացած մարտի վայրից տանում են հիւրանոց։ Այստեղ խօսում է սև նախանձը և անյագ վրէժխնդրութիւնը. Թախծոտ է իմ հոգին, արիւն է կաթում սրտից. հազիւ դու էլ մի գիշեր գոնէ այնպէս անքուն անցրու, ինչպէս ես Աստուծոյ ամեն գիշերն եմ անցնում. գէթ մի բոպէ հոգիս կը հրճւի, երբ կը տեսնեմ քո ընկած դին և յաւիտեան փակվող աչքերդ։

Օրէնբուրգում 1894 թ. մի ինչ-որ կնոջ պատճառով վիճում են 2 օֆիցեր ընկերներ և միմեանց վիրաւորելով այնչափ են տաքանում, որ սկսում են իրար ծեծել. յետոյ շուտով ուշքի են գալիս, հաշտվում և քնում. առաւօտեան նորից միմեանից ներողութիւն են խնդրում, համբուրվում ու գնում ծառայութեան։ Բայց բանն արդէն բացվել էր. ծառան կռւի ժամանակ, նկատելով որ լաւ բան չէ սպասվում, դուրս է գնում և յայտնում հարևան կապիտանին. սա միւս օրը ամեն ինչ պատմում է այսպէս անուանված օֆիցերների «պատւի ատեանին» և «պատւի ատեանը» որոշում է, թէ որովհետև 2 ընկերները միմեանց պատիւը շօշափել են, մենամարտով պիտի ջնջեն այդ անարգանքը։ 2 օֆիցեր ընկերները ստիպվում են յանձն առնել այդ որոշումը. մենամարտը տեղի է ունենում, սակայն գնդակներն երկուստեք վրիպում են. ստիպում են երկրորդ անգամ կռւել և այս անգամ ընկերներից մէկը սպանվում է։ Այսպիսով որչափ դատապարտելի է «օֆիցերների պատւի դատարանի» որոշումը, նոյնպէս և օֆիցերների թուլութիւնը. սրանք փոխանակ հրաժարվելու ծառայութիւնից՝ ընդհակառակը գերադասում են սպանական ցուլերի նման երկու անգամ մենամարտի ելնել ու մեռցնել ընկերոջը։

Յարգելի դասախօսը մի այլ աւելի կուրիօզ դէպք պատմեց։ Մի նահանգական քաղաքում, այգում զբօսնում էր մի գիմնազիստ իր քրոջ հետ. սրանց կողքով անցնում է մի ջենտլմեն օֆիցեր և, տեսնելով գեղեցիկ աղջկան, ցինիքաբար գոչում է. «Хорошая штучка». Գիմնազիստն անխօս քրոջը տանում է տուն և վերադառնալով այգի՝ օֆիցերից պատիւ է պահանջում. վերջինս, ոչ այս և ոչ այն, բռնում է գիմնազիստի ականջից և սկսում քաշքշել. տղան կամենալով ազատվել օֆիցերից՝ ձեռքը յետ է տանում և ուղիղ օֆիցերի երեսին մի հարւած հասցնում. տեսնելով որ լաւ բան չէ սպասվում, սկսում է փախչել. օֆիցերը սուրը մերկացրած ընկնում է նրա ետևից. գիմնազիստը հևիհև հասնում է թատրոնին և ներկայացման ժամանակ ներս մտնում. հասարակութիւնը միջամտում է և օֆիցերին հանգստացնում է։ «Պատւի ատեանը» լսում է այս ամենի մասին և որոշում է մենամարտ. բայց որովհետև գիմնազիստն անչափահաս էր, վճռում է, որ նրա փոխարէն հայրը դուրս գայ օֆիցերի հետ մենամարտի։ Հայրը, 65 տար. մի ծերունի, տեղական պետական բանկի կառավարիչը, երբ այս մասին լսում է, զարմանում է, որ մի մարդու են մենամարտի հրաւիրում, որն իր կեանքում մարդու չէ վշտացրել, ուստի և մերժում է կռւի գնալ, յայտնելով որ եթէ որդին որևէ չարութիւն է գործել, նա կը պատժի նրան. «ատեանը» չէ բաւականանում սրանով և որոշում է, որ օֆիցերը գնայ պետական բանկը ու նրա առանձնասենեակում ապտակ տայ նրան. ծերունին ծայրահեղ վրդովված հնազանդվում է և մի պաշտօնական վայրում, պաշտօնական ժամին տեղի ապտակվում օֆիցերից։

Այս և սրա նման շատ դէպքեր գալիս են ապացուցանելու, որ. մենամարտը՝ որպէս մի վայրենի և վաղուց հնացած սովորութիւն՝ միանգամայն անհանդուրժելի ու աննպատակայարմար պիտի համարվի ինչպէս հասարակ մահկանացուների, նոյնպէս և ժողովրդական ներկայացուցիչների համար։

Մենամարտը մարդկային արիւնռուշտ շրջանի մի մնացորդ է. և եթէ խոտելի ու սոսկալի է մարդասպանութիւնը, ապա ևս առաւել զզուելի ու նողկալի է գիտակցական մարդասպանութիւնը։ Այստեղ արդէն մարդը գազան չէ, այլ ինչ-որ արիւնարբու հրէշ։ Առ-Ջէն

Մոսկվա, 28 ապրիլի

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղալաչա, 26 ապրիլի

Մօտ 20 տարի է, որ գիւղացին ազատ էր մորեխի կօռ-բէգարից. տանջված, հիւծված գիւղացին, երևի, վիճակված չէ մի քանի տարի, յաջորդաբար, փոքր ի շատէ բարւոք կեանք վարել։ Հազիւ-հազ էր նա նախկին ձախորդ տարիների պարտքերից թեթևացել, ահա Կուր գետի միւս ափին երևաց մորեխը իր աւերմունքներով. մորեխը հետևանք է երկարատև երաշտի. երկու ամսին մօտ է, որ անձրև չէ գալիս, արօտատեղիներն ու մարգագետիններն ըսկսել են դեղնել, անասուններին ուտելու խոտ չը կայ, որից ստիպված շուտով սար քօչեցին։ Երաշտի տևողականութիւնից փչացել են նաև շատ տեղերում արտերը։ Մորեխը ոչնչացնելու համար գիւղերից արդէն մշակներ են դուրս անում. մեր հայ գիւղերից ևս բանուորներ տարան ամսիս 26-ին։ Ողջ-առողջ գնացին, մի գիտէ քանիսն հիւանդացած պիտի վերադառնան. ոչ կանոնաւոր սնունդ ունեն գնացողները, ոչ քնելու տեղ և ոչ էլ տեղաշոր…

Գիւղերում սովորութիւն կայ, որ այսպիսի երաշտ կամ զանազան վարակիչ հիւանդութիւնների ժամանակ Հաղբատից բերում են ս. Նշանը և գիւղերը շրջեցնում, պատարագ են մատուցանում, թափօրներ կատարում, մատաղներ մորթում և աջահամբոյր տալով վերադարձնում մեծ պատւով, յարգանքով։ Ճնշող տպաւորութիւն է թողնում մարդու վրա, երբ ականատես է լինում այսպիսի մի հանդէսի. ամբողջ գիւղի երկսեռ բազմութիւնը ժամի դուռը հաւաքված սրտատրոփ սպասում է ս. Նշանի գալուն. զանգակի ձայնն ուշացածներին ևս հրաւիրում է, իսկ գիւղի հոգևորական դասը խաչով, աւետարանով, բուրվառով և զգեստներով գիւղի ծայրին սպասում է, մօտենալը նկատելով իսկոյն զգեստաւորվում է և շարական երգելով, մեծ հանդիսով հասցնում է եկեղեցու դուռը, թափօր կատարում։ Զանգակների ղօղանջիւնները, հոգևորականների երգելը և ծնկաչոք ժողովրդի անձայն մրմունջները գրկախառնվում են միմեանց հետ…

Ինչպէս առաջ էի գրել, խոզերը սարսափելի կերպով կոտորվում են «ծիկլաւէ» կոչված հիւանդութիւնից. 100-ից տասը չէ մնում. այս ցաւը տասնեակ հազարների վնաս հասցրեց Ղալաչա, Կօղբ, Բարանա գիւղերի խոզապաններին. հիւանդութիւնը վարակիչ է, և նա մեր գաւառը տեղափոխվեց Բօրչալուի գաւառից։

Տարածված է մեր գաւառում շների հիւանդութիւն. տների դռները, ոչխարի և տաւարի հօտերն առանց շների են մնացել։

Խաղողի այգիներին և պտղատու ծառերին մեծ վնաս է հասցնում սև ճանճը։ Անասունների (ընտանի) և ուտելեղէնների սաստիկ թանգութիւն է. թանգանում է մանաւանդ բուրդը, իսկ հացի գինը միջակ է։

Հալլէի գիսաստղը 5—6 օր է, որ գիշերվայ ժամը 2-ից մինչև լոյսը երևում է, պոչը դէպի հարաւ։ Մելքիսեդէկ քահ.

Ղափան, 25 ապրիլի

Ղափանը այսօր կանգնած է մեծ գործի առաջ։ Նա արդէն զգացել է ժամանակի աչք ծակող կարիքը և նրա հետ միասին հասկացել է իր ծով ցաւերի մէկուճար դարմանի՝ լուսաւորութեան նշանակութիւնը։

Երեք տարի է, որ Ղափանում գոյութիւն ունեն ծխ. դպրոցներ, բացված Բ. Հ. Կուլտուրական Միութեան և «Արամազդ» ընկ. նախաձեռնութեամբ։ Որպէս մի նոր գործ, դպրոցական կեանքը հարուստ է բազմաթիւ թերութիւններով, որոնք ժամանակի ընթացքում կը կանոնաւորվեն անշուշտ։ Դպրոցը սիրվեց ժողովրդից, ներշնչեց նրան իր շինարար ազդեցութիւնը, պատռեց մեր կեանքի սև մթնոլորտը և նրա տակ հեծող խաւարի որդիներին քշեց դէպի լոյս աշխարհ։ Եռում է այսօր շրջանիս ամեն կողմում դպրոցական շինութեան գործը, որ ուսման կանոնաւոր ընթացքի համար ամենաէական նշանակութիւնն ունի։

Գալով Բարաբաթում գիւղի դպրոցին, հարկ եմ համարում մի քանի խօսք ասել. Բարաբաթումը շրջանիս ուսումնածարաւ գիւղերից մէկն է. բայց ինչո՞ւ նա այսօր ուշ է սկսում իր դպրոցի շինութիւնը. Նա պէտք է վաղ սկսէր, նա պէտք է առաջին օրինակը լինէր, բայց ուշացել է։ Ուշացել է, որովհետև նրա վեց տարիներից ի վեր հողային վէճը հողատիրոջ հետ միանգամայն քայքայել է նրա տնտեսութիւնը, բայց այնուամենայնիւ դարձեալ յետ չէ ուզում մնալ հարևան գիւղերից. աններող պայմանների մէջ նա դարձեալ վճռել է մինչև սեպտեմբեր ունենալ դպրոցական յատուկ շինութիւն։ Գիւղացիներին օգնութեան հասաւ Ալ. Մելիք-Ազարեանի հանքերի կառավարիչ Արամ Մեթվաճեանը, որ նուիրեց դպրոցի շինութեան համար 300 ր. արժողութեամբ գերաններ և 100 ր. փող։ Արաքս

ԲՈՒԺԱՐԱՆՆԵՐ ԵԱԼՏԱՅՈՒՄ

Եալտա, 14 ապրիլի

Ամսիս 4-ին, ցեր. ժամը 3-ին, քաղ. վարչութեան դահլիճում կայացաւ Բժիշկների Ընկ. ընդհ. ժողովը։ Բացի բժիշկներից՝ ժողովին ներկայ էին և ուրիշ ինտելիգենտ անձինք։ Ընկերութեան անցեալ տարվայ գործունէութեան տեղեկագիրը կարդացվելուց յետոյ՝ կին-բժիշկ Րադելը մի ընդարձակ դասախօսութիւն կարդաց թոքախտի դէմ մաքառելու մասին։ Համեմատելով այդ հիւանդութիւնը մարդկային միւս հիւանդութիւնների հետ, դասախօսուհին թւերով պարզ ցոյց տուեց, թէ որպիսի սարսափելի քանակութեամբ մատաղ զոհեր է տանում թոքախտը։ Խօսելով բազմաթիւ պատճառների մասին, որոնք նպաստում են թոքախտի լայնածաւալ տարածման, նկատեց, որ մարդիկ, դժբաղդաբար, մինչև այսօր հաստատապէս դեռ չեն համոզված, որ այդ հիւանդութիւնը վարակիչ է և որ տարափոխվելու առաջն առնելու համար անհրաժեշտ է հիւանդին առանձնացնել, ընտանիքի մերձաւոր առողջ անդամներից հեռացնել։ Թոքախտաւորներ սարսափելի շատ են, ուստի անհնար է նրանց բոլորին բժշկելու նպատակով կլիմայական այս կամ այն առողջարար տեղը ուղարկել։ Այդ պատճառով,—ասաց դասախօսուհին,—ամեն մի երկիր պիտի աշխատի իր հողի վրա իր սեփական սանատօրիան ունենալ և այդտեղի ազգաբնակութեան և թոքախտաւոր հիւանդներին տեղն ու տեղը բժշկել։

Համեմատելով այդ տեսակէտից Գերմանիան Ռուսաստանի հետ, դասախօսուհին մանրամասն ցոյց տուեց, թէ որպիսի ուժեղ կազմակերպված կռիւ է սկսված Գերմանիայում թոքախտի դէմ և որչափ թոյլ ու անկանոն է այդ կռիւը մեզանում։ Առ հասարակ բժշկական միջոցների մասին խօսելիս նա նոր բան չասաց, այլ թւեց այն բոլոր յայտնի պայմանները, որոնցով նոր սկսված հիւանդութեան զարգացման առաջը կարելի է առնել, այսինքն կանոնաւոր կեանք, մաքուր օդ, դիւրամարս ու սննդարար կերակուր, չոր ու արևային սենեակ և այլն։

Րադելից յետոյ խօսեց բժիշկ Իվանովը. Նա ասաց՝ թէ բաւական չէ մխիթարվել, որ Եալտայում կլիմայական պայմանները հրաշալի են, այլ պէտք է աշխատել բարեկարգութիւններ ստեղծել և ընդհանուրի համար կեանքը հեշտացնել։ Կարդալով բարենորոգումների մասին կազմած իր մանրամասն ծրագիրը, նա բացատրեց այդ ծրագիրն իրագործելու անհրաժեշտութիւնը, որպէս զի Եալտան իսկապէս առաջնակարգ բոլոր տարվայ կուրօրտ լինի։ Զբօսավայրերի մասին խօսելիս, Իվանովը այն առաջարկութիւնը արեց, թէ որովհետև քաղաքում էլեքտրաքարշ պիտի լինի և հեռաւորութիւնը կորցնելու է իր նշանակութիւնը, ուստի պէտք է դիմել ուր հարկն է, որ «Մասանդրա» կոչված Կայսերական պարկի մուտքը բաց լինի ու ամենքի համար թոյլատրելի։

Անցեալ տարի լրագիրներում մենք գրել էինք, թէ Եալտայի բժշկական ընկերութիւնը մտադիր է տուբերկուլեօզային բժիշկների համար սանատօրիա հիմնել։ Մի ամբողջ տարի նրանք հողաբաժին էին որոնում ու չէին կարող կանգ առնել այս կամ այն կէտի վրա։ Վերջապէս այս օրերս ընկերութիւնը 40,000 ռուբլով ձեռք է բերել Մագարաչի մօտ $6^1/_2$ դեսեատին հող. մօտ ապագայում պիտի ձեռնարկեն սանատօրիայի շինութեան գործին։ Մի ուրիշ ընկերութիւն քաղաքի մօտերը մտադիր է սանատօրիա կառուցանել տուբերկուլեօզային զինուորների համար։ Ինչպէս յայտնի է, գրականագէտները, ուսանողները, գործակատարները նոյնպէս մտածում են իրանց մասին։ Լսելով Եալտայի կլիմայական առաւելութիւնների մասին՝ Ռուսաստանի ամեն կողմերից ձմեռ, գարուն գալիս ու գնում են թոքախտաւորները։ Աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել այն դժուարութիւնների մասին, որոնց հանդիպում են հիւանդները։

Նախ բնակարանատէրերը, տեսնելով որ սենեակ վարձել ցանկացողը թոքախտաւոր է, մերժում են սենեակ տալ, վախենալով որ նրա պատճառով միւս առողջ կենողները կը փախչեն։ Եթէ թոքախտաւորին սենեակ տալու էլ լինեն, նրանից անհամեմատ աւելի գին են պահանջում։ Բժիշկը խորհուրդ է տալիս հիւանդին վարձել արևային չոր ու աժան սենեակ և, որքան կարելի է, ծովի մօտ։ Լաւ, եթէ հիւանդը հարուստ է, փողի զօրով ամեն դժուարութիւններին յաղթում է. իսկ ի՞նչ անէ չքաւորը։ Նա ստիպված է լինում հեռուները գնալ, այն էլ մութ ու խոնաւ «հիւսիսային» սենեակ վարձել։ Եթէ հիւանդութեան սկիզբն է—դեռ ոչինչ, մի կերպ կարելի է տեղաւորել. իսկ եթէ «բանը բանից» անցել է, այդպիսի հիւանդի դրութիւնը կրիտիքական է լինում։ Այդպիսի հիւանդին սանատօրիաներում էլ, պանսիօններում էլ չեն ընդունում։ Բացի դրանից՝ հիւանդներ այնքան շատ են լինում, որ տեղ չէ լինում բոլորի համար, ուստի ընդունվում են նրանք, որոնք յուսալի են առողջանալու։ Եթէ անխտիր բոլորին ընդունելու էլ լինեն, չքաւորները դարձեալ դուրսն են մնում, որովհետև անկարող են սանատօրիաների կրակի գին վարձը վճարել։ Աւելորդ է խօսել սնունդի և բժշկական միւս միջոցների մասին։ Այստեղից պարզ է, որ շատ հիւանդներ, փոխանակ առողջանալու՝ աւելի վատանում են։ Ճշմարիտ է, Եալտայում կան եկւոր աղքատ հիւանդներին օգնող մի քանի ընկերութիւններ, սակայն նրանց միջոցները այնքան սուղ են, իսկ կարօտեալների թիւն այնքան շատ, որ անկարող են հիւանդներին զգալի օգուտ հասցնել։ Այդ տեսակէտից վերևում յիշված կին բժիշկ Րադելի առաջարկութիւնը միանգամայն նպատակայարմար է։ Անհրաժեշտ է, որ ամեն մի երկրի հասարակութիւն իր երկրի թոքախտաւորների մասին ինքը մտածէ։ Տաք կամ ցուրտ, ծովային կամ լեռնային կլիման այնքան էլ նշանակութիւն չունի։ Մաքուր օդ, լաւ սնունդ ամեն տեղ կայ. հարկաւոր է ժողովրդական սանատօրիաներ ունենալ և թոքախտաւորներին հիւանդութեան առաջին նշանների ժամանակ ընդունել և այդպիսով ուրիշներին վարակվելուց ազատել և հիւանդներին շուտափոյթ օգնութիւն հասցնել։ Ժամանակը անցնելուց յետոյ հիւանդները որ կուրօրտն էլ որ գնան՝ անօգուտ է։ Յար. Խաչատրեան

ՄԵՂՐԻԻ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋԸ

Մեղրիի երկդասեան-երկսեռ դպրոցը ներկայ 1909/10 թ. թևակոխել է իր գոյութեան 30-րդ տարին, մի ժամանակաշրջան, որի ընթացքում այդ դպրոցը սերունդներ է կրթել ու դաստիարակել՝ գիւղական կեանքի փշոտ ու տատասկոտ ասպարէզի գործիչներ ընծայելու։ Եւ Մեղրիի դպրոցն այդ տեսակէտից իրաւամբ պարծենալ կարող է, որ իր դերը կատարել է՝ գիւղական խաւար իրականութեան մէջ։

Նրա երբեմնի սաներից մի քանիսը միդասեան դպրոցը վերջացնելուց յետոյ՝ միջնակարգ և բարձրագոյն կրթութիւն ստանալով՝ եկել-կապվել են հայրենի գիւղի հետ և այսօր տուն ու ընթացք տալիս կրթական ու հասարակական ծանր ու պատասխանատու գործերին։ Գիւղում չէ գտնվի մի անհատ—հասակաւոր թէ երիտասարդ—որ գրագէտ չը լինի։ Եւ այդ միմիայն շնորհիւ ծխ. դպրոցի, որի պատմական դերը մեր կեանքում ակնյայտնի է.

եղել Մեղրիի հասարակութեան գիտակից տարրի համար։

Սակայն աւելորդ չեմ համարում յիշել նաև այն—անկողմնապահ լինելու համար—որ այստեղ էլ դպրոցը՝ մեզանում ընդհանրապէս կռուախնձոր դարձած տարաբաղդ հիմնարկութիւնը՝ միանգամայն ազատ չէ եղել նոյն այդ հասարակութեան ծոցում սնված մի քանի անհատների խնդիրներից ու ոտնձգութիւններից, որոնց թողած բացասական ազդեցութիւնը միշտ վառ գոյներով արտացոլել է դպրոցական կեանքի վրա և վերջինիս պալարներից մէկը կազմել։

Կրկնում եմ նորից, որ Մեղրիի դպրոցը զերծ չէ եղել այդօրինակ կրքերից, որոնք, սակայն, հեռու են եղել լայն հասարակական ու թայֆայական բնոյթ կրելուց։ Դպրոցից դուրս ամեն տեսակ մեքենայութիւններ լարվել են մի քանի շահագրգիռ անձանց կողմից՝ դպրոցում պաշտօնավարող այս կամ այն ուսուցչի գործունէութիւնը վարկաբեկելու նպատակով, բայց միշտ էլ յօդս են ցնդել այդ մեքենայութիւնները և անզօր եղել՝ ակտիվ դեր կատարելուց և հասարակութեան տրամադրութեան վրա այս կամ այն կերպ ազդելուց։ Մի հանգամանք, որ խիստ նշանակալից է կրթական գործի նորմալ ու խաղաղ կեանքով ապրելու տեսակէտից։

Սակայն այս դեռ բոլորը չէ. ուրախութեամբ գալիս եմ արձանագրելու Մեղրիի դպրոցի այն խոշոր ու դրական քայլը, որ արել է անցեալ ուսումնական տարվանից, բաց անելով իր դռները հարևան Թուրքաբնակ գիւղերի երեխայոց առաջ, տալով վերջիններիս ձեռքը հաւասարապէս այն զէնքը, որով և փարատելու են իրանց շուրջը տիրող դարերի խաւարը և նոր ուղի հարթելու՝ դէպի լոյսն ու ճշմարտութիւնը։

Արդէն երկրորդ տարին է, ինչ 184 հոգուց բաղկացած երկսեռ աշակերտութեան շարքերում սովորում են 4 Թուրք երեխաներ դպրոցումս։

Եւ իսկապէս ինչը կարող է հրաշխիք ու գրաւական լինել անկեղծութեան և եղբայրական սիրոյ, քան այս հանգամանքը,—հարազատ սերնդի կողքին կրթել ու դաստիարակել Թուրք երեխային, որի մտաւոր կեանքը դատապարտված է եղել ճակատագրական անտարբերութեան։

Որքան ուրախալի կը լինէր, որ մեր միւս դպրոցներն էլ հետևելով Մեղրիի դպրոցին՝ հիւրընկալէին իրանց յարկի տակ Թուրք երեխաներին, որով նպաստած կը լինէինք թէ նրանց առաջադիմութեանց և թէ բարեկամական սերտ յարաբերութեան։

Պէտք է վերջ դնել դարերի ընթացքում ռոմանտիկ գրականութեան սերմանած ատելութեանն ու չարակամութեանը. մանաւանդ ներկայումս, երբ տնտեսական շահերով կապված ենք միմեանց հետ աւելի, քան երբևիցէ։

Մօտաւորապէս այդ ցանկութիւնն արտայայտեց Գօրիսի ղազին, որ իր հօտին այցելութեան գնալիս, նոյեմբերի սկիզբներին հանդիպեց Մեղրի, այցելեց դպրոցը և մի շարք բարեմաղթութիւններ անելուց յետոյ, հեռացաւ գոհ սրտով։

Վերև ասացինք, որ 30 տարվայ անցեալ ունի Մեղրիի դպրոցը, որը, սակայն, մինչև անցեալ ուսումնական տարին ունեցել էր չորս բաժանմունք միայն. իսկ 1909/910 թ. ուսումնական տարվայ սկզբին՝ ընդառաջ գնալով ժողովրդի հասունացած պահանջներին՝ բացինք և 5-րդ բաժանմունքը, չը նայած այն դժուարութեանց ու խոչընդոտներին, որոնք ընկածքէին 5 հոգուց բաղկացած ուսուցչական կազմի վրա։

Այս ուսումնական տարում այդ դժուարութիւնները մասամբ վերացվել են՝ շնորհիւ հին կազմի վրա աւելացած վեցերորդ ուսուցչի, որով հնարաւորութիւն ունեցանք՝ ըստ «Նախագիծ ծրագրի»՝ կատարել դասերի բաշխումը՝ աննշան փոփոխութեամբ։

Դպրոցի նախկին ուսուցչանոցում սիրողների նախաձեռնութեամբ շինված է մշտական բեմ, որ գաւառական այս հեռու անկիւնում իր կարողութեան չափով բաւարարութիւն է տալիս ժողովրդի հոգեկան պահանջներին՝ թարմ հոսանք անցկացնելով վերջինիս միօրինակ կեանքի մէջ։

Մեղրի Գ. Մելոյեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

—

Պետերբուրգ, 3 մայիսի

Նախագահում է իշխան Վօլկօնսկին։

Շարունակվում է ծառայողների կիրակնօրեայ հանգստի հարցի վիճաբանութիւնը։

Հայր Իւրաշկեվիչը կրօնական բնաւորութեան շարժառիթներով պնդում է ծառայողներին միանգամայն ազատել պարապմունքներից կիրակի և տօն օրերը այնպէս, որպէսզի այլադաւանները այդ օրը նոյնպէս իրաւունք չունենան առևտուր անել։

Գօդնեվը գտնում է, որ այլադաւաններին կիրակի և տօն օրերը առևտուր անելն արգելելը կը նշանակէ խղճի ազատութեան ճնշումն կատարել։ Հռետորն առաջարկում է իրաւունք տալ այլադաւաններին ազատ առևտուր անել կիրակի և տօն օրերը (ծափեր ձախից)։

Կուզնեցովը կարծում է, որ պրոլետարիատը ինքը պէտք է որոշէ՝ թէ որ օրը շաբաթվայ մէջ պէտք է տօնել, որ օրը՝ ոչ։

Առևտրի մինիստրի օգնական Միլլէրը ընդգծում է, որ կիրակնօրեայ հանգիստը, ինչպէս անպայման ընդհանուր կանոն, պէտք է տարածվի համայն Ռուսաստանի վրա մի ծայրից միւսը, սակայն հասարակական ինքնավարութիւնները պէտք է իրաւունք ունենան համաձայն տեղական պայմանների թոյլ տալ կիրակի օրերը առևտուր անել հինգ ժամից ոչ աւել։

Ընդմիջումից յետոյ Ենիկեևը մի ժամ տևող ճառում, ողջունելով ծառայողների համար մի մշտական հանգստի օր նշանակելու ցանկութիւնը, միևնոյն ժամանակ ցաւակցելով այլադաւանների վերաբերութեամբ ցոյց տրված մեծամեծ անարդարութեանց համար, որոնք օրինագծով զրկվում են իրանց կրօնական և կենցաղավարական պայմանների համաձայն առևտուր անելու իրաւունքից, պաշտպանում է մահմեդական ֆրակցիայի ուղղումը (ծափ. ձախից)։

Բանւորական կուսակցութեան մասնաժողովի զեկուցանող բարօն Ստրուվէն խօսում է բոլոր ուղղումների դէմ։

Զամըսլօվսկին յայտնում է, որ աջակողմեանները ձայն կը տան յօգուտ լիակատար կիրակնօրեայ և տօնական հանգստի՝ ինչպէս աշխատաւոր մարդու շահերի, այնպէս և կրօնական տեսակէտից։

Ալեքսեևը յայտնում է, որ նացիօնալիստները ձայն են տալիս Պարչէվսկիի ուղղման դէմ, որ Լեհական Թագաւորութեան մէջ տօները Գրիգորեան տոմարով պէտք է կատարել, որովհետև ուղղափառ հաւատը գերակշռող նշանակութիւն ունի ամբողջ պետութեան մէջ։

Քուէարկութիւն. ակներև մեծամասնութեամբ ընդունվում է՝ համաձայն աշխատաւոր խմբակի ուղղման՝ լիակատար տօնական հանգիստը բոլոր կիրակի օրերը, Պենտեկոստէի տօներին, Ծնունդի և Զատկի առաջին երկու օրը, Նոր-Տարին և գիւղացիների ազատագրութեան օրը։

Ձայների մեծամասնութեամբ՝ ընդդէմ սօցիալ-դեմօկրատների և աշխատաւորականների՝ տօների թւից դուրս է հանվում աշխատաւոր խմբակի առաջարկած մայիսի 1-ի տօնումը։

194 ձայնով ընդդէմ 101-ի մերժվում է սահմ.-ռամկավարների առաջարկութիւնը՝ իրաւունք տալու մահմեդականներին և հրէաներին առևտուր չանելու համար ընտրել կիրակվայ փոխարէն ուրբաթ կամ շաբաթ օրը։

Մերժվում է Պարչէվսկիի ուղղումը՝ Լեհական Թագաւորութեան մէջ տօները Գրիգորեան տոմարով կատարելու մասին։

Մերժվում է իրաւունք տալու ինքնավար մարմիններին առանձին հրահանգներով առևտուրը և հանգիստը ուրիշ օրեր յետաձգելու։

Սըրտլանօվը ասում է, որ, մերժելով մահմեդական ֆրակցիայի ուղղումները՝ ուրբաթ օրվայ հանգստի մասին, Դումայի մեծամասնութիւնը խախտեց մահմեդականների կրօնական ու ազգային շահերը, որի պատճառով մահմեդական ֆրակցիան իբրև բողոք մահմեդական դաւանութեան վրա կատարած բռնութեան դէմ՝ հեռանում է նիստի դահլիճից (աղմուկ, աջից ձայներ՝ «Այդպիսի բան չը կայ»)։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Քննիչ գ.-խ. Ռէյնկէն ներկայացաւ Կովկասի Փոխարքային և այցելեց Վրաստանի էկզարխին։

◆ Ֆինանսների մինիստր Կօկօվցեվի և պետական բանկի կառավարիչ Կոնշինի գալուստը Թիֆլիս սպասվում է այս մայիսի 24-ին։ Հետևեալ օրը տեղի կունենայ պետական բանկի տեղիս նորակառոյց շէնքի օծումը և հանդիսաւոր բացումը։ Մտադրութիւն կայ օգտվել մինիստրի ներկայութիւնից և նրա մասնակցութեամբ քննել կախէթեան երկաթուղագծի հարցը ազնուականութեան ընդհանուր ժողովում՝ մայիսի 27-ին։

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը հնարաւոր չը գտաւ հաստատել իրանց պաշտօններում բոլոր այն անձանց, որոնք այս տարվայ սկիզբներին ընտրվել էին Քութայիսի նահանգի ազնուականական պաշտօնների համար, նկատի առած ընտրութիւնների ժամանակ եղած անճշդութիւնները և օրինազանցութիւնները։ Նոր ընտրութիւնները կայանալու են այս տարի ևեթ։

◆ Ինչպէս յայտնի է, հանգուցեալ Կարապետ Վարդանեանը մի շարք բարեգործական կտակներ է արել. Ներկայումս նրա որդիքը՝ Տիգրան և Իսահակ՝ իրանց հօր կտակի տրամադրութիւններն արդէն իրագործել են։ Նրանք այս օրերս յանձնել են և 500 ր. Հաղբատի ս. Կարապետի դպրոցի հոգաբարձութեանը՝ որպէս նպաստ նրա խնամքին յանձնված երկսեռ ուսումնարանին, ինչպէս որ տրամադրում էր հանգուցեալի կտակի համապատասխան կէտը։

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը հաստատեց Բագուի քաղաքապետութեանը կից պաշտօնավարող վարչական ատեանի որոշումը՝ դատարանին յանձնելու Բագուի 3-րդ մասի նախկին պրիստաւ Կօնստանդին Գ. Ալէքսէևին քր. պատժ. 377-րդ և 378-րդ յօդուածների մեղադրանքներով։

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութեան կարգադրութեամբ 500 րուբլի տրվեց մոբեխի ոչնչացման համար Սղնախի գաւառում։

◆ Շուտով Թիֆլիսում կը կազմակերպվեն Թաղական սանիտարական հոգաբարձութիւններ, որոնց կազմի մէջ մտնելու են քաղ. սանիտ. բժիշկներ, տեղական ոստիկանական պրիստաւներ, առևտրա-տնտեսական մարմնի գործակալներ և տեղական բնակիչներից ընտրեալներ։

◆ Մայիսի կէսերից կովկասեան հանքային ջրերում կը սկսվի հրատարակվել նոր օրաթերթ «Голосъ Курортовъ» անունով, Եակօվլևի խմբագրութեամբ։

◆ Մայիսի 8-ին Վրաց Ազնուականութեան Թատրօնում դասախօս Ռօքակիձէն կազմակերպում է գրական երեկոյթ։

◆ Ռուս թերթերը գրում են, որ այս երկու օրս խուզարկութիւններ և ձերբակալութիւններ են կատարվել Քութայիսում։

◆ Կիրակի, մայիսի 9-ին Թիֆլիսի ժողովարանը կը տեղափոխվի իր ամառային շէնութիւնը։

◆ Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ 50-ական ր. տուգանքի են ենթարկվում Զաքար Գալուստովը միսը աւելի գնով վաճառելու համար և Ալէքսէյ Մօսէսովը հացցէների սեղանի կանոնները խախտելու համար։

◆ Յիշեցնում ենք հասարակութեան, որ այսօր, Արտիստական Ընկերութեան ամառային այգում յօգուտ «Հայ չքաւոր երեխաներին օգնող Թիֆլիսի «Լոյս» ընկերութեան» տեղի է ունենալու զբօսանք։ Զբօսանքի ծրագիրը կազմված է բաւական հետաքրքրական և ճոխ։ Ցանկալի էր, որ հասարակութիւնը իր ներկայութեամբ նպաստէր զբօսանքի աջողութեանը։

◆ Երէկ մենք հաղորդել էինք, որ Խարփուխի ս. Սարգսի եկեղ.-ծխ. տղայոց դպրոցի հոգաբարձութիւնը վճռել է առաջիկայ ուսումն. տարվանից բաց անել այդ նոյն ուսումնարանում IV բաժանմունք, ճշտելով որ Թիֆլիսի հայ տղայոց ծխ. դպրոցներից ոչ մէկն այդ բաժանմունքը չունի, բացի աղջկանց Ցօփանեան-Մարիամեան և Գայեանեան դպրոցներից։ Այս լուրի առիթով մեզ հաղորդում են, որ Թանդոյեան և Քամոյեան օրիորդաց դպրոցներն էլ ունեն ինչպէս IV, այնպէս և V բաժանմունքներ։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարում «Պետական Դումայում» Զամըսլօվսկիի ճառի մէջ «պալատներ» խօսքը պէտք է կարդալ «պալարներ»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Աչերօն. „Գիւղատնտեսական հրատապ հարցեր‟. Թիֆլիս, 1910 թ., փոքրադիր 110 երես, գինն է 20 կ.։

Աչերօնի գրքոյկը շօշափում է ժամանակակից հետաքրքրութեան խնդիրներ։ Նա տալիս է տեղեկութիւն գիւղատնտեսական արդի կարիքների բնաւորութեան մասին և կանգ է առնում գիւղատնտեսական կրթութեան անհրաժեշտութեան վրա։

Բերելով եւրօպական փորձից ցուցումներ՝ հեղինակը ուրուագծում է գիւղատնտեսական կրթութեան հիմունքները, բացատրում է զանազան տիպի դպրոցների նշանակութիւնը և վերջումը տալիս է գիւղատնտեսական դպրոցի ծրագիրը։

Աչերօնի ծրագիրը նպատակ ունի հայթայթել ուսանող պատանուն թէ ընդհանուր և թէ մասնագիտական կրթութիւն։ Գիւղատնտեսական դպրոցը պէտք է տայ գիտակցական մի գործող տնտեսական կեանքի բարւոքման համար։

Հեղինակը խոստանում է իր աշխատութեան շարունակութեան մէջ խօսել նոր դարաշրջանի և մանր գիւղացիութեան դրութեան մասին։ Ա. Ք.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 16 ապրիլի

«Մշակի» № 74-ում հանգուցեալ Կ. Նադիրեանի կտակակատարները, պատասխանելով Վ. Միրաքեանի և Մ. Քարհանեանի՝ «Մշակի» № 20-ում գրած նամակին, շօշափում են և իմ պատիւս՝ որպէս նախկին կառավարչի։

Ինչպէս յայտնի է, համարեա 2 տարի է, ինչ վախճանվել է տ. Կ. Նադիրեանը, որը կտակով իր կարողութիւնը թողել էր բարեգործական այլ և այլ նպատակների։ Իր ժամանակին այդ կտակի մասին շատ խօսվեց։ Այդ կտակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ֆանտազիա։ Թող հասարակութիւնն իր դատավճիռը կարդայ, թէ ինչո՞ւ նախկին կտակների մէջ կտակակատարներ էին նշանակված հայ հասարակութեան ընտիր անդամներ՝ իշխ. Բէհբութեան, Ա. Մելիք-Ազարեան և ուրիշները, իսկ հիմա մարդիկ, որոնք իրանց ձեռքը գցելով տիկնոջ ամբողջ կարողութիւնը՝ անկօնտրոլ վատնում են նրա վերջին ժառանգորդները և հասարակութեանը մոլորեցնելով մեղքը ուրիշների վրա գցում։

Երբ ուշադրութեամբ կարդացէք հանգուցեալի կտակը և կը համոզվէք, որ նրա կարողութիւնը լիկվիդացիա անելուց յետոյ հասարակութեանը ոչինչ չի մնայ, իսկ իրանք կտակակատարները կը ստանան իրանց օգտին զուտ կապիտալի $^1/_5$ մասը և 4 դեսեատին հող, մինչդեռ նախկին կտակներում ներկայ կտակակատարների անունները էլ յիշատակված չէին, ուր մնաց թէ յօգուտ դրանց մի բան լինէր կտակված։

Ներկայ կտակակատարները սկսել են զանազան լուրեր տարածել այս ու այն կողմ՝ իբր թէ ես վատնել եմ տիկնոջ կարողութիւնը և իբր թէ ես չեմ յանձնել նրա կալուածական թղթերը, հաշիւները և այլն և իբրև թէ հէնց դրա համար ոստիկանութեան կարգադրութեամբ խուզարկվել ու բանտարկվել եմ, որովհետև ինձ մօտ գտնվել են տիկնոջ դօկումենտները։

Ես երկար ժամանակ կառավարելով տիկնոջ գործերը՝ ամեն ճիգ ու եռանդ թափել եմ և կանոնաւորել նրա գործերը, որի համար շատ ու շատ անգամ թէ հանգուցեալ տիկնոջից և թէ նրա մօտիկ ծանօթներից շնորհակալութիւն եմ ստացել։ Իմ իսկ կառավարութեան ժամանակ նրա գործերն այնքան լաւացել էին, որ շատ բարեգ. ընկերութիւններ և զանազան անձինք, բացառապէս հայերից, նպաստներ և օգնութիւն էին ստանում և օրհնում տիկնոջ կեանքը։ Ես, իբրև վրացի, ամեն աջակցութիւն և խրախուսանք էի ցոյց տալիս տիկնոջ այդ բարի ձգտումներին, և իմ ժամանակն էր, որ Վարագի դպրոցը և այլք ստանում էին կանոնաւոր նպաստներ։

Այդ ժամանակ էր, որ Արտեմ. Նադիրեանը, իմ վրացի լինելը պատճառաբանելով, սկսեց պղտորել թէ տիկնոջ և թէ հայ հասարակութեան մտքերը և ձեռք առաւ տիկնոջ կարողութիւնը։ Ես ամենայն կանոնաւորութեամբ յանձնեցի թէ կալուածները, թէ հաշիւները և թէ ինձ մօտ գտնված բոլոր դօկումենտները, բացառութեամբ մի քանի աննշան թղթերի, որոնց իսկոյն ևեթ միջոց չունէի յանձնելու։ Տիկինը, ստանալով հաշիւը, իմ աշխատութեան վարձի դիմաց մի ստորագրութիւն տուեց 5000 ր.։ Այնուհետև 1906 թ. ձեռք բերելով մնացած աննշան թղթերն էլ, ես նոտարական կարգով հրաւիրեցի տիկնոջը նոտարի գրասենեակը՝ ստանալու ինձնից այդ թղթերն էլ, սակայն տիկինը՝ ստանալով հրաւէրը՝ ամբողջ օր սպասեցնել տուեց ինձ նոտարի գրասենեակում և չը բարեհաճեց գալ ստանալու այդ թղթերը, որի մասին մի քանի անգամ կրկնվեց նոտարական հրաւէրը։

Սրա հետ ներկայացնում եմ խմբագրութեանդ նոտարի վաւերաթղթերը, որոնցից պարզ երևում է, որ ես երբէք փախուստ չեմ տուել դօկումենտները յանձնելուց, սակայն Արտէմ Նադիրեանը ինձ անուանարկելու և իմ արիւն-քրտինքով վաստակած 5000 ր. չը տալու համար՝ այդ ճանապարհն է ընտրել։ Եթէ կողոպտել եմ տիկնոջ կարողութիւնը, ինչո՞ւ հանգուցեալ տիկինը փախուստ տուեց միջնորդ դատարանից, որի մասին ես շարունակ պնդում էի և խնդրում կազմել միջնորդ դատարան, որպէս զի անհիմն ասէկօսէները վերջանային և հասարակութեան համար ամեն ինչ պարզ լինէր։ Սակայն Արտ. Նադիրեանը, լաւ իմանալով որ ես՝ իբրև նախկին կառավարիչ՝ գիտեմ ամեն ինչ և կարող եմ հասարակութեան առաջ դնել գործերը, սկսեց ամեն ինտրիգ լարել իմ դէմ, ինձ անբարեյոյս անձ հրատարակեց, որպէս թէ ես նրա անձի դէմ սպառնալիքներ եմ տուել։ Ահա այդ պատճառով, յիրաւի, իմ տունը խուզարկեցին և ինձ բանտարկեցին, սակայն երբ նկատեցին, որ կասկածելի ոչինչ չը կայ, երեք օրից յետոյ արձակեցին։ Ահա այդ իրողութիւնն է, որ Արտ. Նադիրեանը խեղաթիւրել է, որովհետև պարզ է, որ մի Նադիրեանի դօկումենտների համար ոչ ոստիկանութիւնը և ոչ ժանդարմը խուզարկութիւն չեն կատարի, քանի որ դա մի մասնաւոր գործ է, այն էլ դատարանի։

Հրապարակով յայտնում եմ նրանց, որոնց սրտին մօտ է տիկնոջ կտակի իրագործումը, որ ես ամեն ժամանակ պատրաստ եմ հանգուցեալ տիկնոջ կարողութեան մասին ամենամանրամասն տեղեկութիւն տալու, թէ ինչ դրութեամբ յանձնել եմ և թէ այժմ ինչ դրութեան են հասցրել կտակակատարները։

Մանրամասնութեանց մէջ չեմ ընկնում, միայն հրաւիրում եմ հայ հասարակութեան լուրջ ուշադրութիւնը Արտ. Նադիրեանի այդ գործողութիւնների վրա և իմ աջակցութիւնը առաջարկում երևան հանելու գործի դրութիւնը։

Համաձայն Միրաքեանի և Քարհանեանի բողոքի, պէտք է շտապել հաշիւ պահանջել նրանցից, թէ չէ՝ յետոյ ուշ կը լինի։

Նիկօլայ Պանիեվ

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—$12^1/_2$—$1^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1^1/_2$—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. Ֆ. ԲՕՂԴԱՆՕՎԱ—$9^1/_2$—1 ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—6—$6^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. Ֆ. ԲՕՂԴԱՆՕՎԱ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—46

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսաստանից եկած
ԵՐԿՈՒ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ՔՈՅՐԵՐ
(ԼԵՀՈՒՀԻՆԵՐ)
տեղ են որոնում—մէկը՝ հասակաւոր երեխաների խնամատար կամ [illegible] (КОМПАНЬОНКА) պաշտօնով՝ օտար քաղաք գնալու պայմանով, միւսը՝ տնտեսուհու պաշտօնով Վլադիկավկազ կամ հանքային ջրեր գնալու պայմանով։
Հասցէն. Тифлисъ. Саперный пер. № 1.
(ա.օ.) 506. 2—1

Լոյս տեսաւ և ծախվում է
Տղամարդի **ՏՐԻՊԵՐԸ** (սուսունակ)
և նրա բժշկութիւնը։ Կազմ. փէլդշ. Ա. Եսայեան։ Գինը 20 կոպ.։ Մանրամասն բացատրութիւններ, խորհուրդներ, ռեցեպտներ։ Սուսունակից չը վարակվելու համար նախազգուշութեան միջոցներ և դեղեր։ Անհրաժեշտ գրքոյկ է իւրաքանչիւր մարդու համար, մանաւանդ գաւառացի բնակիչների համար, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Գիրքը մեծ արագութեամբ տարածվում է։ Դիմել՝ Թիֆլիս—«Կենտրոնական», «Գուտենբերգ», «Փարոս» և «Կովկասեան» գրավաճառանոցներին։ Ծախվում է նաև „Տղամարդի սեռական կեանքը‟, գինը 30 կոպ.։ Գիրքը սաստիկ կարճ միջոցում տարածվեց և շուտով կը սպառվի։
(օ. մ.) 491. 4—2

ПРЕВОСХОДНЫЙ
ГЛЯНЦЪ ЛАКЪ
ДЛЯ ЧИСТКИ
КАЗАНСКАЯ
№ 6
ОБУВИ
ФАБРИКИ
А.ЗАКСЪ
СПЕТЕРБУРГЪ КАЗАНСКАЯ 6
FÜR HERREN, DAMEN und KINDER
SCHUHE
С.ПЕТЕРБУРГЪ

(П. 43004) 447. 10—4





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ! ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ! ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ!
կասէ իւրաքանչիւր, ով բերել կը տայ ստորև յիշված գարնիտուրը՝ բաղկացած 18 ԱՐԺԷՔ., ՕԳՏԱԿԷՏ ԵՒ ՀԱՏ-ՀԱՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ—մինչև օրս չեղած գնով—ՄԻԱՅՆ 4 Ր. 85 Կ. (փոխ. 15 ր.)
1) ՏՂԱՄ. ԳՐՊ. ԳԵՂ. ԲԱՑ ԺԱՄԱՑ. անգլ. իսկական սև պողպատից, ամուր շինուածք, անկէր (ոչ ցիլինդր), ընթացքը քարերով, չը սեղմվող զըսպանակով, փոշուց զերծ պահող ապակիով, ձայնաւոր և մինչև րոպէները ստուգված ընթացքով։
2) ԷԼԵԳԱՆՏ ՇՂԹԱՅ իսկական նիկէլից, երկար կամ կարճ.
3) ԲՐԷԼՕԿ նոյն մետաղից։
4) ԺԱՄԱՑ. ԳՈՂԱՑՎԵԼՈՒՑ ՊԱՀՊԱՆՈՂ ԻՐ։
5) ԻՍԿԱԿԱՆ ոսկուց՝ 56 յարգի՝ մատանի (տես նկարը) արհեստական կեղծ ադամանդով։
6) ԱՄԵՐԻԿ. ՊԱՏԵՆՏ. ԱՆՎՆԱՍ ԱԾԵԼԻ «Սօլինգէն» (տես նկարը), որով իւրաքանչիւրը, նոյնիսկ մթութեան ժամանակ, կարող է ինքն իրան սափրել։
7) ՆԻԿԷԼԵԱՅ ԹԱՍ։
8) ՆԻԿԷԼԵԱՅ ՎՐՁԻՆ։
9) ԿԱՇՈՒԷ ՊՈՐՏՄՕՆԷ փողի համար, 6 բաժ. (առ. բաժ.՝ ոսկու համար), արտասահման. իսկ. կակուղ կաշուց և մեխանիկ. փականով՝ պարունակելով իր մէջ գաղտնի տեղ կնիքի համար։
10) ԿԱՈՒՉՈՒԿԷ ԿՆԻՔ պատուիրողի անուն-ազգանունով։
11) ՄԻ ՍՐՈՒԱԿ ԹԱՆԱՔ կնիքի համար։
12) ՆՈՐՈՒԹԻՒՆ։ Տնային պատենտ տպարան, որ պարունակում է մօտ 200 տառ, թւանշ. և կէտադր. նշ., տպելու համար այցետոմսեր, բլանկներ, ծրարներ և այլն։
13) ՏԱՌԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՒՆԵԼԻՔ։
14) ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ։
15) ԲԱՐՁ ՏՊԱՐ. ՄՇՏԱԿԱՆ ՄՈՒՐԻ ՀԱՄԱՐ։
16—18) ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ ՃԿԵՂ ՆԵՍՍԵՍԵՐ, շուրջը սաղրի կաշուց, պարունակելով իր մէջ յղկված հայելի, սանր ու պիլոր՝ ատամներն ու ականջները մաքրելու համար։
Այդ բոլորը միասին՝ փոխ. 15 ր. միայն 4 ր. 85 կ.։ Կանացի բաց ժամաց. 17 յաւելուածներով 5 ր. 35 կ.։ Տղամ. և կան. փակ. (խուլ) ժամաց. (ցիլ.) 17 յաւել. 5 ր. 85 կ.։ Ուղարկ. ենք շուտափոյթ, պատուէրն ստանալուն պէս, երաշխաւորելով ճիշդ ընթացքի համար 6 տարով, առանց կանխավճարի։ Ճանապարհածախքը 50 կ., Սիբիր և Միջին-Ասիա 90 կ.։ Պատուէրները խնդրում ենք հասցէագրել.
Въ „БАЗАРЪ НОВОСТЕЙ“, Варшава, Граничная № 5—127.
P. S. Խնդրում ենք կատարեալ հաւատ ընծայել, քանի որ ուղարկում ենք լաւ յատկ. ապրանք, որի համար և ստանում ենք բազմաթիւ շնորհակալ. և գովեստ. նամակներ։
Թղթակցութիւնները ռուսերէն։
(5,25,15,6,25) (В. 32349) 500. 5—1

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.